

Ვ ᲑᲞᲗᲗᲑᲗᲗᲗ Ვ ᲑᲗᲑᲗᲗᲗ

75


(Ვ ᲑᲗᲑᲗᲗᲗᲗ)

Ვ ᲑᲗᲑᲗᲗᲗ

Ვ ᲑᲗᲑᲗᲗᲗ

Ვ ᲑᲗᲑᲗᲗᲗ

Ვ ᲑᲗᲑᲗᲗᲗ



Ვ ᲑᲗᲑᲗᲗᲗ

Ვ ᲑᲗᲑᲗᲗᲗ

Ვ ᲑᲗᲑᲗᲗᲗ

Ვ ᲑᲗᲑᲗᲗᲗ

Ვ ᲑᲗᲑᲗᲗᲗ

Հրատարակութիւն ԿԱՎՈՒՅԻ

ԵՐ. ԹՕԼԱՅԵԱՆ - Ա. ՔԷՉԵԱՆ

Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

ԵՐ ՁԵՌՔԻՆ ԳԻԾԵՐԸ



ՄՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝


ԲՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ

ԱՆՑՆԱԼԻ,

ԱՊԱԳԱՅԻ

Ե Ի

ՀԻՒԱՆԳՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ



Ա. Պոլիս

Տպագր. Ս. ՕՀԱՆԵԱՆ

1920



Ի՞նչ

Կ'ըսեն

Ձեր

Ձեր քիչ

Գիտերը

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Այս գիրքը, ավելի քան անուշիկ, նշանա-
րիտ գործ մըն է, որ երբեք չի նմանիր միևնույն հիմնա-
մետ կարգապահ ժողովրդական այլ ընդ այլոց գր-
քոյցներու: Ասիկա աշխատութիւնն է իսկական գրե-
ցուհիի մը, որ ա՛յնքան մեծ համբաւ ստացաւ Աւրս-
տիոյ, Հունգարիոյ եւ Գերմանիոյ մէջ: Տասնք ութը
սարեկան էր, երբ ներկայացաւ Աւստրիականացիոց
կայսեր եւ կայսրուհիին, առաջինին իմացուց իր
տղերակալն մահը, եւ երկրորդին զաւրիսն անձնա-
պանութիւնը, եւ քաղաքաւորութեան տնտեսական:
Գերմանիոյ կայսրը, իր քաղաքաւորութեան առաջին
սարեկերուն երբ գայն կանցեց, եւ խնդրեց որ իր
ձեռքն այլ ինչ, զնշուհիսն անոր յայտնեց արկածա-
խնդիր կեանք մը, եւ սարտիկակն եղեռնութիւններ՝ իր
քովակնակ կեանքին մէջ, երբ մանաւանդ Գերմա-
նիոյ ծովային ոյժը իր զագարթակէքը հասկեր...:

Չեղանակաւորութեան այս գործը քաժնուած է
հիւնգ մասի: Առաջինը, արագ, յսակ քաղաքաւորութիւն
մըն է ձեռքի գիտութեան (ձեռնակաւորութեան):


Երկրորդը՝ ձեռքի քաժնու է:


Երրորդը բացատրուիլն կուսայ ձեռքի ձեռ-
ուն, մատերուն ելն.:

Չորրորդը կը բացատրէ ձեռքի գիծերը, ցոյց կու-
սայ բաղդի գիծերը, ամուսնութիւն ելն.:

Հինգերորդը մէզի կը ցուցնէ ձեռքը երջանիկ
մարդուն, դժբաղդի, գործի մարդուն, ազանիկ,
ոճրագործի ելն.:

Վերջապէս ձեռքի բոլոր գաղտնիքները պարզուած
եւն հաստիւն վերջաւորութեանը դրուած պզօիկ բա-
նարանիկ մէջ:





Բառակուսի մասեր (Գր. 2)

Չեմք ա՛յն ինչ, որուն հետ պիտի և անուսնանայ
(Բարոյն, գեղեցկին եւ հշտարօին սերը)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ի՞նչ է ձեռնահամայուլթիւնը.— Ձեռքը,
հոգւոյն պատկերը.— Յայտնող մաս-
ները.— Եղունգները.— Ի՞նչ կը
բացատրէ ձեռքին ձեւը.— Ի՞նչ
կ'ըսեն գիծերը:

1. Ի՞ՆՉ Է ՁԵՌՆԱՀՄԱՅՈՒԹԻՒՆԸ

Ձեռնահամայուլթիւնը այլեւս կախար-
դական գործ մը չէ, այլ դիմագիտութեան,
գրչագիտութեան (graphologie) պէս գի-
տութիւն մը, որովհետեւ Ձիցկարի կամ
Գնչու ըսուած թափառաչրջիկ ցեղը հոռ-
մէն, Յունաստանէն և Եգիպտոսէն մեղ-
բերած է բոլոր հին ատենուան աւանդու-
թիւնները, որոնց վրայ հետզհետէ այսօր
ա՛յնքան նոր տեղեկութիւններ, յայտնու-
թիւններ աւելցած են, որ այլեւս ձեռնա-
համայուլթիւնը իր աւելորդապաշտ բնոյթէն
դուրս ելած է:

2. ՁԵՌՔԸ ՀՈԳԻՌՅՆ ՊԱՏԿԵՐԸ

Եթէ աչքերը հոգւոյն հայելին են,

ձեռքն ալ մեր անձին ցոլացուին է: Մոյ-
լին և վաւաշտօին ձեռքը կարճ և լայն է:
Եսասէրին ձեռքը ճերմակ և երկայն,
կծծիին ձեռքը կարճ և նեղ, առողջ մար-
դուն ձեռքը՝ մազոտ, սիրկ, լաւ ազուց-
ուած. հիւանդոտ մարդուն, որ շուտ սխալ
մե մի, խռոչաւոր, նիհար, և գէշ ա-
զուցուած է ձեռքը: Արուեստագէտին
ձեռքը վաճառականին ձեռքին պէս չէ,
կծծիին ձեռքը չի նմանիր վեհանձն մար-
դուն ձեռքին: Փռուսէրը, հպարտը,
խոնարհին, հասեօտին պէս ձեռք չունի:
Վերջապէս ամէն մարդ իր նկարագրին
համապատասխանող ձեռք ունի:

Յ. ՅԱՅՅՆԻՉ ՄԱՅՆՆԵՐԸ

Ահաւասիկ կին մը սրածայր ձեռքե-
րով, սրածայր մասներով, ձեռնահմայու-
թիւնը մեզ կ'սէ. — Զգուշացի՛ր. այս գե-
ղեցիկ ազնուապետական ձեռքը, նուրբ և
ճերմակ, վարդագոյն եղունգներով, կը
յայտնէ արուեստագէտ, բանաստեղծ և
խելացի անձ մը, բայց զուրկ բարոյա-
կանէ, վերացական, յարստփոխ բնաւո-
րութեամբ, և միշտ երազներու մէջ: Մի՛
ամուսնանար հետը, հրաշալի սիրունի մը
կ'ըլլայ, սակայն աստելի կին մը: Ընդհա-



Բախի օճուղ մասեր (Պատ. 3)
Գիսակաս ընդունակություն.—Ճիզիսակաս գործունեություն

կառակն՝ բարի և քաղցր բնաւորութեան տէր է ան, որ ունի համաչափ մատներ. նիւթապաշտ և ծանր բնաւորութեան տէր է ան որ խոշոր մատներ ունի ճարպոտ, իրարմէ բաց մատները կը յայտնեն թե թեւաբարոյութիւն, հետաքրքրութիւն, անձնապաշտութիւն. իրարու մօտ մատները գոգտնապահութիւն, անտեսագիտութիւն:

4. ԵՂՈՒՆԳՆԵՐԸ

Կամակորները, բարկացոտները, կըռուազանները կարծր և կարճ եղունգներ ունին. փառասէրները, չարերը կարծր և դէպի վար հակած եղունգներ ունին:


5. ԹԷՒՆՁ ԿԸ ՆՇՅՆԱԿԷ

ՁՆՌՒՅԻՆ ՁՆԻԸ

Հայն և կարծր ձեռք մը, քառակուսի մատներով նշան է քաջութեան, խիզախութեան, վիճարանող ոգիի: Եթէ միեւնոյն ատեն լայն բացուածքով է և մատներուն երկայնութիւնը հաւասար է ափին մեծութեան, կը նշանակէ ուղղամտութիւն, անկեղծութիւն եւ գաղափարներու բարձրացում: Ընդհակառակն՝ թոյլ եւ նեղ ձեռք մը, երկայն եւ նուրբ մատներով, երկչոտութեան և եսասէր ոգիի նշան է:

Յ. ԹՎ. ԻՆՉ ԿՐՍՆՆ ԳԵՏՆԲԸ

Հիմա որ վեր ի վերայ ծանօթացանք
 ձեռքին և մատներուն ընդհանուր ձեռե-
 րուն լեզուին, որքա՛ն աւելի գոհ պիտի
 ըլլանք ծանօթանալով ձեռքի գիծերուն
 դադանիքին, որ մեզի պիտի դիւրացնէ
 ճանչնալ մեր ծանօթներս: Ձեռքը ուրիմն
 հոգւոյն հայելին է, մտքին պատկերը,
 որովհետեւ ուղեղը և սիրտը կը մտածեն,
 իսկ ձեռքն է որ կը գործադրէ:





Արամայր մասնիկ (Պատկեր 4)
Ձևաբանական համար
որովհետև այն չէր անհատական
թեքիանալիս կա անհարգուրիս

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Չեռֆին ֆարսկար.— Մասները.— Լեռ-
ները.— Հրաժի դաւերը.— Գիծերը.—
Չեռֆին աշխարհագրութիւնը:

Մարդ երբ ուզէ երկիր մը ճամբորդել,
առաջին դործը պէտք է ըլլայ ուսումնա-
սիրել այդ երկրին քարտէսը. այնպէս ալ
ձեռնահամայութեան սկսելէ առաջ պէտք է
ծանօթանալ ձեռքին քարտէսին, և զայն
լաւ մը ուսումնասիրել բաղդատելով զայն
ձեր ձեռքին կամ ձեր բարեկամին ձեռ-
քին հետ:

1. Մասները (սեւ Ա. պատկեր)

Բթամաս.— Առաջին մատնոսկրը (ե-
ղունջին տակի) կը նշանակէ՝ կամֆ, Բ.ը՝
սրամաքանութիւն, Գ.ը՝ Ատաղիկի լերան
սկիզբը՝ սեր:

Յուցամաս.— (Արամազդի մատը) Երբ
երկայն է և իլաձել (fuselé), կը յայտնէ
անհանդարտ միտք մը, սրածայր՝ կը
նշանակէ չարութիւն, բահի ձելով
(spatulé) (Տ. Յրդ պ.) չափէ դուրս կո-

բով, քառակուսի՝ ճշմարտութեան սէր, կարգապահութիւն, խնայասիրութիւն: Ահաւասիկ այն կինը, որուն հետ պէտք է ամուսնանանք, ան պիտի ըլլայ մեր կեանքին ապահով, հաւատարիմ և գործունեայ ընկերը: (Տ. պատ. 2րդ)

Միջնամաս.— Երեւելի մաս) Մրածայր՝ կը նշանակէ թեթեւութիւն, քառակուսի՝ խոհեմութիւն, բահի ձեւ՝ գործունէութիւն:

Մասնեմաս.— (Ապողոնի մաս) Մրածայր՝ արուեստ, սէր և երեւակայութիւն քառակուսի՝ ճշմարտութեան սէր և բարձր իմացականութիւն, բահի ձեւ՝ թատրերգական տաղանդ:

Ճկոյթ.— (Հերմէսի մաս) Մրածայր, պերճախօսութիւն, համոզիչ լեզու, դիւանագիտութիւն, խորամանկութիւն, քառակուսի՝ ուղիղ դատողութիւն, գործէ հասկցող:

Յուցամատր և միջնամատր երբ իրարմէ շատ հեռացած են՝ երբ ձեր ձեռքը բռնաք, կը նշանակէ մտածումներու մեջ անկախութիւն, մատնեմատր և ճկոյթը երբ իրարմէ հեռացած են՝ գործելու մեջ անկախութիւն, երբ բոլոր մատները ի-



Էկսցերք (Պատ. 5)

Մասերն արվանդանն վրայ կորը լին կայ

բարմէ շատ հեռու են, արտօրինակութիւն եւ անձնավաստակութիւն:

Երրորդ մասնակրեքը երբ աւելի խոշոր են՝ կը նշանակէ որկրամոլութիւն, առաջին մասնակրեքը երբ ամբողջ մէջ հակառակ են կը նշանակէ կծծիութիւն, ընդհակառակն՝ դուրս հակառակ, իսկասիպութիւն:

Բթամաստը ամբողջ մէջ հակառակ կծծիութիւն, հակառակ դիրքով՝ վեհանձնութիւն, առաստձեռնութիւն:

ԼԵՌՆԵՐԸ

Լեռ կը կոչուի մասներուն արմատները առաւել կամ նուազ դուրս ցցուած մասերը, որոնք զատ զատ իրենց անունը ունին (տ. պատ. 5րդ):

Արամագդի լեռ, շատ ցցուած կրօնասիրտ թիւն, փափաքներու իրականացում, աւելորդապաշտութիւն, երբ գոյութիւն չունին՝ նայ, անկրօնութիւն, ծուլութիւն, կոշտութիւն:

Երեւակի լեռ. — Շատ ցցուած, խորհող միտք, խոհեմութիւն, մենասիրութիւն, տխրութիւն:

Ապողոնի լեռ. — Ցցուած՝ արուեստի

և իմացական մեծ կարողութիւն, գրա-
մասիրութիւն, ստախօսութիւն, քիչ ցըց-
ուած՝ ձանձրոյթ և տխրութիւն:

Հերմեսի լեռ.— Տղուած՝ սէր գի-
տութեանց, մտքի աշխուժութիւն, ստեղ-
ծող միտք, շատ ցըցուած՝ ստախօսութիւն,
կեղծիք, գողութիւն, քիչ ցըցուած՝ կրա-
ւորական կեանք:

Ասողիկի լեռ.— Տղուած՝ գեղեցկի և
հաճոյքի սէր, շատ ցըցուած՝ անհաստատ
միտք, վաւաչոտութիւն, հազիւ երեւցած՝
պաղարիւնութիւն:

Լուսնի լեռ.— Շատ որո՞ երեւա-
կայութիւն, անբիծութիւն, պաղարիւնա-
կան միտք, շատ բարձրացած՝ յուսահա-
տութիւն, ջղային տկարութիւն, բացա-
կայ՝ ջլատութիւն, ձանձրոյթ:

Հրատի դատօր

Չեռքին մէջ կը տեսնուի դաշա մը,
Հրատի դատօր, Լուսնի լեռան և Ասողիկի
լեռան մէջտեղ Արամազդի լեռան տակ
(տ. պատ. 5): Երբ Հրատի դաշտը շատ
որոշ է, կը նշանակէ քաջութիւն, խիզա-
խութիւն, կիրք:



ամուսնոր
913. ①

...
...
...

30 ամսրի
30 ամսրի
30 ամսրի

Մրջանիկի մարդուն ձեռք (Պատ. 6)
Իտալի ձեռք

ԳԻԾԵՐԸ (սես. պատ. 1)

Գիծերը աւելի որոշ ըլլալով ձախ ձեռքին մէջ, միշտ պէտք է դայն առնենք քննելու:

Կեանքի գիծը.— Կը նշանակէ երկարակեցութիւն, առողջութիւն, երբ երկայն է և որոշապէս գծուած՝ երկար կեանք, լաւ առողջութիւն, կրկին՝ խոր ծերութիւն, և երջանիկ կեանք (Տ. երջանիկ ձեռքը պատ. 6):

Գլխու գիծը.— Երբ երկար է եւ որոշ գծուած, առողջ դատողութիւն, լուսաւոր միտք, կեանքի գիծէն շատ բաց՝ անձնավատանութիւն, Երեւակին սակ կտրուած՝ չարաչար մահ:

Սիրտի գիծը.— Լաւ գծուած, որոշ եւ գունաւոր, Արամազդի լեռնէն մինչեւ Հերմեսի լեռը երկարած՝ երջանիկ և սաստիկ սէր, կարճ՝ չոր սիրտ, օղակաւոր՝ անյարատելութիւն, կարմիր՝ եղբրական սէր, սժգոյն՝ շուայտ կեանք:

Ճակատագրի գիծը, կամ Երեւակի գիծ, բաղդի կամ աղէտի.— Զորս տեսակ է. 1. Երբ կը սկսի կեանքի գիծէն կը նշանակէ հանգիստ կեանք, 2. Հրատի դաւ-

սեն՝ անցողակի ճանճրոյթներ, 3. Դաս-
 սակի ապարանջանեն, արտաքոյ կարգի
 բաղդ, 4. Երբ Լուսնի լեռնեն կը սկսի՝
 բաղդ սէրէ կամ դիպուածէ, մեծկակ
 դրամօժիտ կամ անսպասելի ժառանգ :

Առողջութեան գիծ.— Լաւ գծուած՝
 երկար եւ որո՞՞ գեղեցիկ առողջութիւն
 մը, խելք. խորհուպորս՝ տատանեալ ա-
 ռողջութիւն :



ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ձեռքին եւ մասներուն ձեւերը

Ի՛նչ կը տեսնենք առաջին ակնարկով

Ձեռք մը ուսումնասիրելէ առաջ նախ
պէտք է քննել որ թո՛յլ է թէ պիրկ է,
մատները շիտա՞կ թէ հանգոյցաւոր, սրա-
ծա՞յր են թէ քառակուսի կամ բահի ձե-
ւով :

Պզտիկ ձեռքերը, շատ նրբաւարտ եւ
նկարիչներու երազած ձեւով՝ բան մը չեն
արժեր կրողին բարոյականին տեսակէ-
տով :

Սրկար ձեռքերը. — Արուես, հաշակ,
հարպիկու թիւն :

Կարն ձեռքերը նշան են կամփի, եւ
վանառականական յարմարութեան :

Շատ նեղ ձեռք մը բան մը չարժեր
երեւակայութեան տեսակէտով :

Թոյլ ձեռք մը, կակուղ, նշան է թոյլ
նկարագրի :

Կարծր ձեռք մը՝ գործունեութեան: Երբ
 ձեռքին ափը աւելի երկար է քան մաս-
 ները, նիւթականութիւնը կը տիրապե-
 տէ քան խելքը, ափը աւելի կարճ՝ ճիշդ
 հակառակն է: Այն ձեռքերը որոնց ափը
 ծածկուած է բազմաթիւ գիծերով նշան է
 ջղայնութեան, անհանդարտ բնութեան և
 դիւրագգածութեան: Գրեթէ առանց գիծի
 ափ մը՝ նշան է շափաւոր բնութեան եւ
 հակասագրապաւեանութեան:

ԹԷ ԻՆՉ ԿԸ ՅՈՒՑԵՆՆ ՄԱՏԵՆԵՐԸ


Երկար՝ նշան են հարպիկութեան, վա-
 յելչասիրութեան:

Կարճ մասները՝ վանառականու-
 թեան և վարչական կարողութեան:

Մատները ըլլան երկար թէ կարճ, ե-
 րեք ձեւ կ'ունենան. սրածայր, քառա-
 կուսի, բակի ձեւով, այսինքն ծայրը լայն-
 ցած:

Սրածայր մասները կը ցուցնեն նաւակ
 բանաստեղծութեան, վեպի և արուեստի.
 (տես պատ. 4):

Քառակուսի մաները՝ կարգապա-




Ծայր գեղակի ձեւով բրամասը
անբազորժին է (Պատ. 7)

հուլթեան, պարսանանաչուլթեան, և յաճախ
անոտի բաներով զգալորը (տես պատ. 2):
Բահի ձեւով մատները զոյց կուտան գի-
տուլթեանց յարմարութիւն (Տես պատ. 3):


Շիտակ եւ նուրբ մատները կը յատ-
կանչեն սմարդութիւն քան խորհող միտ,
բայց եթէ ոսկորներուն զօղուած մասերը
փոթութիւններ ունին՝ կը յայտնեն խո-
հուլութիւն, փիլիսոփայութիւն, դա-
տողութիւն (տես պատ. 8):

Երբ բրամասը երկար է՝ նշան է տի-
րապետութեան, երբ կարճ է՝ ստիկութեան,
ձեռքէն դուրս հակած՝ վեհանձնութեան,
ափին մէջ հակած՝ կծծիութեան:



Ա. հանգոյց
կարգապահ
միտ

Բ. հանգոյց
նիւթապաշտ
միտ



Ողորկ մատ

Հանգուցաւոր մատ (Գ)


Երբ բթամատին առաջին մատնուկը
 երկայն է՝ նշան է կամֆի, երբ երկրորդը
 երկայն է, կը նշանակէ դատողութիւն,
 տրամաբանութիւն (տես պատ. 9): Երբ
 բթամատին երկու մատնուկներն ալ կարճ
 են, կը նշանակէ թէ զայն կրող անձը միշտ
 ուրիշին տիրապետութեան տակ պիտի ըլ-
 լայ և երբէք չպիտի ունենայ նախա-
 ձեռնութեան ոգի: Եթէ կարճ է բայց
 ծայրը շատ լայն՝ կը ցուցնէ թէ զայն
 կրողը բարկացած է և կռուազան: Եթէ,
 լաւ ուշադրութիւն ըրէք, բթա մատին ծայրը
 գնդակի պէս կլորցած է կը նշանակէ թէ
 զայն կրող անձին բարկութիւնը զինքը
 մինչեւ ոճիտ պիտի մզէ: Թճրադարձու-
 բուն բթամատը այսպէս կազմուած է:
 (Տես պատ. 7):

ՄԱՏՆԵՐԸ

ԵՒ ԱՍՏՂԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Մատները, ձեռնահմայութեան մէջ ի-
 րենց կրած ազդեցութեան համեմատ հե-
 տեւեալ անուները կ'առնեն.


Ասդիկի մաս (Սիրոյ շատառուածուհին)
 բթամատին համար:




Ա. մասնուկը երկար՝ կը հասնակէ աւելի կամ
 քան մտացիութիւն
 Բ. մասնուկը Ա. մասնուկէն երկար՝ կը հասնակէ
 կամէ աւելի մտացիութիւն




Գ. մասնուկը քանձը՝ կը հասնակէ վաւառոս սէր
 (Պատ. 9)



Յոզգամասք աւելի կարհ՝ քան մասնեմասք
դրամէն աւելի փառք կը սիրէ:



Յուզամասք աւելի երկայն քան մասնեմասք
դրամը աւելի կը սիրէ (Պատ. 10)




Մեկուս եղունգ՝ երկչոտութիւն

Արամազդի մաս .— (Չաստուածներու պետ) ցուցամասին համար:

Մեւակի մաս .— (Որդին երկնքի եւ երկրի, հայր չաստուածներու) միջնամասին համար:

Ապողոնի մաս .— (Գեղարուեստի և բանաստեղծութեան չաստուածը) մատնեմասին համար:



Նարն եղունգ՝ կարգասպահութիւն (Պատ. 11)

Հերմեսի մաս .— (Առեւտուրի չաստուածը) ճկոյթի համար:

Արամազդի մասը՝ երբ երկայն է կը նշանակէ փառասիրութիւն, սիրապետութիւն, փառքի ծաբաւ: Երբ շատ երկայն է, բռնակալութիւն:

Նրեւակի մաս՝ երբ երկայն է՝ կը նշանակէ հպարտութիւն, բայց գաղտնի հպարտութիւն մը, որ շատ անգամ կը տանի տխրութեան: Մեծ գիրքերու տիրանալու, փափաք, սակայն ձախարհութենէ վախնալով ետ կենալ: Ասիկա շհասկըցուածներու մասն է:

Ապուղոնի մասը՝ արհեստներու մասն է, եթէ Արամազդի մասէն աւելի երկար է, կը նշանակէ թէ արուեստի սերը պիտի մոռցնէ փառասիրութիւնը, եթէ Նրեւակի մասին չափ է՝ կը նշանակէ խաղամոլութեան հակում և բախտախնդրի ոգի:

Հերմեսի մասը. — Գիտուններունը երկայն կ'ըլլայ, շատ երկայն՝ կը նշանակէ պերնախօսութիւն, հապնեպ որոշում տուող, մարմնական դիւրաբեփութիւն, Ֆիզիքական ճարտիկութիւն: Կարճ՝ կը նշանակէ հմուկ խելացութիւն, նմանելու եւ մեծերուն հետեւելու փափաք:

ԹԷ ԻՆՑ ԿՐՍԵՆ ԵՂՈՒՆԳՆԵՐԸ

Երկայն եղունգները նշան են երկչոտութեան, անվճռականութեան. կարճ՝ ֆննագասող միտք, կարգապահութիւն, անձնագոտանութիւն. (տես պատ. 11):

Զգուշացէ՛ք այն անձէն՝ որ իր եղունգները կը կրծէ: Զղային, դիւրաբորբէք և մոլի բնութեան տէր է:

ԹԻ՛ ԻՆՉ Կ՛ԸՍՆՆ ԼՅՌՆԵՐԸ

(Տես պատկեր 5)

Ըսինք թէ ամէն մաս իր լեռը ունի: Այս լեռը նոյն մասին ստորին մասը կը գանուի ասին կողմէն: Արամազդի լեռը՝ Արամազդի մասին ստորին մասն է, Երեւակի լեռը՝ Երեւակի մասին, Ապողոնի լեռը՝ Ապողոնի մասին, Հերմեսի լեռը՝ Հերմեսի մասին, Ասդիկի լեռը՝ Ասդիկի մասին: (Տես պատ. 5):

Երբ բթամասին (Աստղիկի) լեռը բարձր է՝ կը նշանակէ զգայնոս և կրնոս սեր, բարձր՝ սակայն առանց գիծերու: Կը նշանակէ զուարթութիւն, բարձր սիրտ, սովորական՝ գորով, աստիակ՝ եսասիրութիւն, ցրտութիւն: Երբ բթամասին տակը շատ մը հորիզոնական գիծեր կան՝ որոնք զլիսու գիծին վրայ կը վերջանան կը նշանակէ դրամական ճազնապ, եթէ կայ գիծ մը որ մինչեւ հետքը կը հասնի՝ սիրոյ պատճառաւ հարստութիւն. եթէ այդ բթամասին տակէն երկու գիծեր մինչեւ

Հրատի լեռը երկարած են, սիրաբանու-
թիւն, եթէ բթամատին ստորոտը կայ աստղ
մը ուրկէ գիծ մը մինչեւ միջնամատը կ'եր-
կարի, ժառանգութիւն, եթէ գիծ մը
բթամատին լեռնէն երկարած է մինչեւ
բախտի գիծը՝ կը նշանակէ սաստիկ սեր,
եթէ երեք գիծեր կը կտրեն կեանքի,
բաղդի եւ գլխու գիծերը՝ կը նշանակէ
սերը կեանքը պիտի խորսակե, երեք
աստղեր կեանքի գիծին քով՝ բաժնուած
սեր, սակայն դժբախտ:

Արամազդի լեռը՝ (ցուցամատին տա-
կը) բարձր կազմուած՝ կը նշանակէ փա-
ռասիրութիւն, պաշտպանելու փափակ.
եթէ ծածկուած է երեւակի լեռան պէս
պզտիկ գիծերով, կը նշանակէ նախանձ՝
տափակ՝ կը նշանակէ ծուլութիւն, անօ-
գուտ կեանք, շատ մը աղօսուած գիծերով՝
լաւ բախտ, լայն՝ գուարթութիւն: Եթէ
լեռը գոյութիւն չունենայ, կը նշանակէ
արժանապատուութեան բացակայութիւն:

Երեւակի լեռը (միջամատին տակը)
բարձրացած՝ կը նշանակէ մեղամաղձոտու-
թիւն, տափակ՝ անխոհեմութիւն, միմի-
ակ գիծով ու խելի յաղթանակ, եր-

կու ոլորապտոյտ գիծերով՝ խելք մը գէշ
գործածուած: Եթէ այս լեռը գոյութիւն
չունենայ, կը նշանակէ իսուր կեանք մը,
առանց կասարեայ գոհացումի:

Ապողոնի լեռը, այսինքն մատնեմա-
տին տակի ցցուած մասը կը նշանակէ
փառք, շատ ցցուած՝ հաննար, մէջտեղը
փորուած՝ արուեսագէտի խառնուածք,
պղտիկ գիծերով ծածկուած՝ վիշտ, լայն՝
թեթեւամտութիւն, բարակ գիծերով՝ ան-
յաջողութիւն. եթէ բարձրացած է և եր-
կու հորիզոնական գիծեր ալ ունի՝ հա-
րսութիւն, եթէ դադարէ կըստ է՝ յա-
ջողութիւն: Եթէ մատին շատ մօտէն
բարձրացած է այս բլուրը՝ կը նշանակէ
հետաքրքրութիւն: Եթէ այդ բլուրը գո-
յութիւն չունենայ՝ կը նշանակէ կասար-
եայ չգոյութիւն արուեստի, իսուր
եւ թախծոս կեանք:

Հերմեսի բլուրը՝ լաւ կազմուած՝ կը
նշանակէ՝ մտազիւթիւն, խելք և գիտա-
կան ուսումնասիրութեանց հակում
և յաջողութիւն առեւտրական ձեռնարկ-
ներու մէջ:

Հայն և գրեթէ ամբ երկարած՝ հան-
նար, տափակ՝ արհամարհանք առեւտրա-

կան գործերու, ձեռքին երեսի կողմը
կազմուած՝ այս բլուրը կը նշանակէ
խարդախութիւնն և ստախոսութիւն, պա-
հարանի (տօլապ) ձեւով գիծերով երբ
ծածկուած ըլլայ, կը նշանակէ հակուս
գողութեան: Եթէ ունենայ գիծ մը, որ
դէպի մատր երկարի՝ նշանաւորներու բա-
րեկամութիւն, հարստութիւն: Շատ մը որոշ
գիծերով ծածկուած՝ բժշկական տաղանդ:
Այս լեռը երբ չըլլայ՝ բոլորովին անյարմա-
րութիւն գիտութեան:

Լուսնի բլուրը, որ կը գտնուի ճկոյթ
մատին տակը, դէպի արեւը բարձրացած
(տ. պ. 5) եթէ լաւ կազմուած է կը նը-
շանակէ վառ երեւակայութիւն, գրական
նաշակ, բանաստեղծի ոգի: Նեղ եւ սա-
փակ՝ աղբաս երեւակայութիւն:

Եթէ այս բլուրէն սկսի գիծ մը որ մին-
չեւ բաղդի գիծը երկարի՝ քախմոս երե-
ւակայութիւն: Իրար խաչաձեւող գիծե-
րով երբ ծածկուած ըլլայ՝ գուարթ երեւ ա-
կայութիւն: Եթէ այս բլուրը բարձրա-
ցած է եւ շատ մը գիծերով ծածկուած՝
ջղայնոսութիւն, նախապաշարուս, նա-
խանձ: Եթէ ունենայ կոր գիծ մը մինչեւ
Հերմէսի բլուրը, այսինքն ճկոյթ մատը,

նախաստեղծութիւն. եթէ դաստակէն սկըս-
ուած գիծերով է ծածկուած որոնք մինչեւ
առողջութեան գիծը կ'երկարին (տ. պ. 1)
1) նամբորդութեան մեջ դժբաղդութիւն :
Եթէ այս բլուրը գոյութիւն չունենայ ե-
րեւակայութեան պակաս, բանաստեղ-
ծութեան եւ գրականութեան արհամար-
հանք:

Հրատի դատար (ափին ճիշդ մէջտեղը
(տ. պ. 5) առանց գիծի՝ կը նշանակէ ոչ
դիւրահաղորդ եւ տխուր բնութիւն, շատ
մը գիծերով անհամբեր բնութիւն եւ ջը-
ղային :

Շատ բարձրացած՝ կամէ, յանդգնու-
թիւն, բարկացոս բնութիւն, երբեմն ալ
սպանութեան հակում : Եթէ այս բլուրը
ունի որոշ գիծ մը որ երկարի մինչեւ միջ-
նամատի (Երեւակի) բլուրը՝ կը նշանակէ
նակասամարտի մեջ մահ : Եթէ ունի երեք
ուղահայեաց գիծեր որոշ՝ բժշկական կո-
չում : Եթէ այս բլուրը գոյութիւն չունե-
նայ՝ երկչոսութիւն, վաճութիւն : Եթէ բը-
նաւ այս լեռները գոյութիւն չունենան եւ
ոչ մէկ մատին վրայ, կը նշանակէ կծծիու-
թիւն, ծիծաղելի օրինապահութիւն, կար-
գապահութիւն :



Սիրտի գիծը շրայածու.— Գլխու գիծ կոտրուած.— Բա
գիծը խորսակուած.— Գեւակի գոյգ գիծ: (Պատ. 12)

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ

Չեռփին գիծերը .— Բաղդից եւ ամուս-
նութեան գիծերը .— Թե ի՞նչ կ'ըսեն
ձեռփին գիծերը .— Շղթաները եւ
ապարանջանները .— Խաչերը ,
ասղերը , ֆառակուսիները եւ
եռանկիւնները :

(Տ . Պատ . 12-14)

1. ՁԵՌՆԻՆ ԳԻԾԵՐԸ

Չեռնահամայութեան սւտումնասիրու-
թեան մէջ իւրաքանչիւր գիծ իր ձեւին
համեմատ իր որոշ նշանակութիւնը ունի :
Գլխաւոր գիծերը հետեւեալներն են . (Տ .
Պատ . 1) :

Կեանքի գիծը , որ ճկոյթ մատին (Աստ-
ղիկին) բլուրը կը շրջապատէ :

Գլխու գիծը , որ բթամատին և սու-
ցամատին մէջտեղէն կը սկսի , գրեթէ
կեանքի գիծին ճիշդ քովէն և հորիզոնա-
բար սրտի գիծին հետ :

Սրտի գիծը որ կը սկսի Արամաղղի

բլուրէն՝ այսինքն ցուցամատի ստորոտէն
և կ'անցնի Երեւակի, Ապողոնի և Հեր-
մէսի բլուրներէն ու կը վերջանայ ձեռքին
ծայրը :

Բաղդի գիծը, որ կը կոչուի նաեւ Ե-
րեւակի գիծ, դաստակէն կը սկսի, կը
շարունակուի ասիին մէջէն և կը վերջա-
նայ մինչեւ Երեւակի կամ Հերմէսի բլ-
լուրը :


Արեւի կամ Ապողոնի գիծ, որ կեան-
քի գիծէն մինչեւ Ապողոնի (մատնեմատի)
լեռը կ'երկարի :

Առողջութեան գիծ, որ կեանքի գիծէն
կը սկսի, Հրաւի և Լուսնի բլուրներէն
կ'անցնի և կ'երկարի մինչեւ Հերմէսի
լեռը (ճկոյթ մատ) :

Նախասեպտեմբերեան կամ Լուսնի գիծ,
որ Լուսնի բլուրէն մինչեւ Հերմէսի բլու-
րը կ'երկարի :

Հրաւի գիծ զոր ամէն ձեռք չունենար
և որ կեանքի գիծին հետ հորիզոնաբար
կ'ընթանայ :


Ամուսնութեան գիծ, (տես պատ. 1)
որ կը սկսի սրտի գիծին վրայէն և կ'եր-
կարի մինչեւ ձեռքին միւս երեսը :



Տարբերակի սպիտակ: Կեանքի զիծիկն աստիճանացոյցը 10կն 90
սարձն (Պս. 13)

2. ԹԷ ԻՆՉ ԿՐՍԵՆ, ՉՆԻՔԻՆ ԳԻԾԵՐԸ

Կեանքի գիծը, խնչպէս իր անուշը կը յայտնէ արդէն, անհատին բուն կեանքին կը վերաբերի: Իր երկայն և որոշ ըլլալէն կամ կարճ և օձապտոյտ՝ կը հետեւցնենք թէ այդ անձը պիտի ունենայ երկա՞ր և հաճելի՞ կեանք մը թէ հիւանդոտ և կարճ կեանք մը: (Տես պատկեր 13): Եթէ կեանքին, սրտին և գլխուն գիծերը իրարու միացած կը սկսին, զայն կրող անձը յանկարծակի և չարաչար մահ մը պիտի ունենայ: Եթէ կեանքին գիծը ցուցամատին աւելի մօտէն կը սկսի՝ ենթական պիտի ունենայ մեծ փառք, կամ գոնէ մեծ յաջողութիւն ըլլա՛յ արուեստի, ըլլայ վանառականութեան մեջ: Եթէ ունենայ շատ մը ճիւղաւորումներ՝ կը նշանակէ դիրքի փոփոխութիւններ: Եթէ այս գիծը կտրուած ըլլայ երկու ձեռքին մէջն ալ, ժառանգական հիւանդութիւններ: Եթէ վերջանայ շատ մը խաչերով՝ յամառ ձախորդութիւն: Հետեւեալ նշանակութիւններն ալ ունի. եթէ կազմէ կղզիներ՝ այսինքն բոլորակներ (տես պատ. 14) Արամազդի բլուրին վլայ՝ թոփասապ, եթէ իրեն հորիզոնաբար գիծ մը ունենայ



Ասորեր, խաղեր, ֆունկցիոնալները եւ պահարանները
գիծերը: (Պատ. 14)

կը նշանակէ ջղայնութիւն, եթէ իր վերջացած կէտէն գիծ մը երկարի մինչև ճկոյթը՝ ասեցախօսական յաջողութիւն: Եթէ երկու ճիւղաւորում ունենայ՝ որուն մին երկարի մինչև Հերմիտի բլուրը, և միւսը՝ Լուսնի բլուրը, կը նշանակէ նամբողութիւն: Եթէ կեանքի գիծը Երեւակի կամ Ապողոնի լեռը բարձրացող ճիւղաւորումներ ունենայ՝ կը նշանակէ ժառանգութիւն: Եթէ մինչև դաստակին ապարանջանները երկարի պղտիկ գիծերով, յուսախաբում, չհասկցուած կեանք: Եթէ ունենայ մէկ ճիւղաւորում մը դէպք բթամատը երկարած՝ վսանգաւոր հիւանդութիւն: Եթէ այդ ճիւղաւորումները դէպք գլխու գիծը երկարին, պատիւ եւ հարսնութիւն: Բայց եթէ այդ գիծը Հրատի դաշտին մէջ կանգ առնէ, դժուարութիւն ստացուածքներու սիրանայու համար: Եթէ այս գիծը սրտի գիծէն եկած ճիւղաւորումներով կտրատուած ըլլայ, առիկա մեղի ցոյց կուտայ սիրահարական վիճերէ յառաջ եկած հիւանդութիւն:

ԳԼԽՈՒ ԳԻԾԸ

Գլխու գիծը եթէ զոյգ երեւի՝ բարձր

իմացականութիւն. այս պարագային պէտք
 է շատ որոշ և երկար ըլլայ: Երկար, շի-
 տակ, շատ որոշ կը նշանակէ նաեւ կամք:
 Կարճ և հազիւ տեսանելի՝ միջակ կամք
 մը և քիչ իմացականութիւն: Երբ որ
 կանգ առած ըլլայ բազմի գիծին վրայ,
 սահմանափակ միտք: Երկար և շիտակ,
 ինայասիրութիւն: Լուսնի բլուրը հակած՝
 պերճախօսութիւն, բանաստեղծութիւն:
 Դէպ ի սրտի գիծը բարձրացած՝ անխոհե-
 մութիւն: Երբ կեանքի գիծին վրայէն
 սկսած ըլլայ, յանձնապաստանութիւն,
 բարկութիւն, կեանքին գիծին հետ բաւա-
 կան մը կապուած՝ երկչոտութիւն: Դէպ ի
 սրտի գիծը բարձրացած և (ճկոյթ և
 մատնեմատ մատները գրկելու պէս)
 խենդութիւն: Նոյն նշանակութիւնը՝ երբ
 ճիւղաւորումով մը վերջանայ մինչեւ
 դաստակը: Երբ բոլորակ մը ունենայ իր
 տեւողութեանը՝ ուղեղային սազնապ. եր-
 այս գիծը ըլլայ կարմիր և սեւ բիծերով,
 սենդ, ճերմակ կէտերով միջնամատին ըս-
 տորոտը՝ դրամական յաջողութիւն: Երբ
 այս գիծը ըլլայ ոլորապտոյտ, քիչ պար-
 կեօտութիւն: Բաւական մը հեռացած՝
 կեանքի գիծէն՝ խելացութեան պակաս:

Սրտի գիծին կապուած Հերմէսի լերան
տակ՝ վաղածամ մահ: Երբ գլխու գիծը
կը մօտենայ սրտի գիծն առանց դպելու՝
սիրոյ երեսէն գերութիւն. երկու մասի
բաժնուած՝ թատերական կոչում: Մասնե-
մաստին բլուրէն յառաջացած գիծով մը
կտրուած՝ աղեցալի սեր: Երբ այս գիծը
ունենայ կապոյտ բիծ մը հրատի դաշտին
մէջ՝ հակում սպանութեան:

ՍՐՏԻ ԳԻԾԸ

Սրտի գիծը շատ որոշ՝ լաւ նշանակու-
թիւն ունի: Եթէ մտնուանդ ունենայ իր
սկզբնաւորութեան մէջ պզտիկ ճիւղաւո-
րումներ մինչեւ Արամազդի բլուրը կը նը-
շանակէ մեծ բաղդաւորութիւն սիրոյ
մեջ: Եթէ ընդհակառակն ծուռումուռ և
շատ մը ուրիշ գիծերով կտրատուած է պէտք
է հետեւցնել թէ զայն կրողը շատ մը
յուսախաբումներ եւ սիրոյ վեժեր պիտի
ունենայ: Տկար կերպով գծուած և մինչեւ
միջնամասը յառաջացած՝ եսասիրութիւն:
Դէպ ի գլխու գիծը հակած՝ ջիւարութիւն:
Ոչորապատոյտ՝ պչրոսութիւն: Խոր և կար-
մէր՝ անգթութիւն: Կեանքի գիծին շատ
մօտ՝ կեղծաւորութիւն: Արամազդի բլուրը

չրջապատած՝ նախանձուքիւն : Երկայն ,
լայն , բայց քիչ որոշ՝ սպանութեան հա-
կուս : Երբ այս գիծը իր սկզբնաւորու-
թեան մէջ ունենայ ճիւղաւորումներ մին-
չեւ Արամազդի բլուրը՝ գաղափարական
սէր . եթէ Երեւակի բլուրէն սկսի՝ նիւթա-
պատ սէր : Եթէ այս գիծը զայդ է՝ անձ-
նուէր սէր . իր տեւողութեան միջոցին ճեր-
մակ կէտերով՝ բարեբախտ եւ բազմաթիւ
սէրեր : Պատիկ բոլորակով մը՝ անհաւասար
սէր : Երեւակի բլուրին տակ կտրուած՝
մօտայուս մահ : Ապողոնի բլուրին տակ՝
կեղծիք , Հերմէսի բլուրին տակ՝ կծծիու-
թիւն , ապուշութիւն : Շղթայուած՝ սրտի
հիւանդութեան ենթակայութիւն : Եթէ
այս գիծը բնաւ գոյութիւն չունենայ , նը-
շան է անգրութեան եւ եսասիրութեան :

ՐԱՂԴԻ ԴԻԾԸ

Այս գիծը շատ որոշ եւ շատ երկար ,
դաստակէն միջնամաստ երկարած՝ կը
խոստանայ եւ մեծագոյն փառք : Շատ
որոշ եւ սկսուած Հրատի դաշտէն՝ բարեկե-
ցիկ կեանք : Կեանքի գիծին վրայ կը տ-
րատուած՝ դիւրի փոփոխում : Ապողոնի
բլուրին վրայ հազած՝ մեծ պերնախօսու-



Ամուսնութեան գիծերը. — Նախաստեղծութեան գիծ. — Աստղիկի
չորսույ: (Գրաք. 15)

թիւն : Լուսնի բլուրէն սկսուած՝ բարեկամներու շնորհիւ հարսուրթիւն : Գլխու գծին վրայ վերջացած՝ դժբաղդուրթիւն անձնական սխալով : Լուսնի բլուրէն ըսկրսուած և սրտի գծին վրայ վերջացած՝ երջանիկ ամուսնուրթիւն : Շատ մը գիծեր զայն կտրատեն հորիզոնաբար՝ վիտս : Երբ ունենայ ճիւղաւորում մը դէպ ի Լուսնի բլուրը՝ սիրոյ վիտս : Ճիւղաւորումներով դէպ ի դաստակը՝ ձախորդուրթիւն : Երբ բաղդի գիծը կանգ առնէ միջնամատին և ցուցամատին մէջտեղ՝ հանդարտ կեանք : Միացած սրտի գծին և անոր հետ Արամազդի բլուրը վերջացած՝ մեկ հասիկ սեր : Սրտին գծին քով վերջացած՝ սիրոյ խրգում :

ԱՐԵՒՈՒ ԳԻԾԸ

Արեւու գիծը կեանքի գիծէն կը սեռի և միշտ նշան է հարսուրթեան : Երբ երկարի մինչեւ մատնեմատին բլուրը՝ փառք, վերջանալուն երեք ճիւղաւորումներով՝ պատիւ : Ընդհակառակն երբ մատնեմատէն շատ վար վերջացած ըլլայ աննշան գիծերով, ձախորդուրթիւն ամեն գործի մեջ :

Բանաստեղծները, գրագէտները, երգանիկ-
ները միշտ գեղեցիկ արեւու գիծ մը կ'ու-
նենան: Երբ այս գիծը գոյութիւն չունե-
նայ, անյաջողութիւն, անօգուտ քղձանք:

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԳԻԾ

Այս գիծը մեզի կը ցուցունէ թէ ո՛ր աս-
տիճանի առողջ է դայն կրողը: Կարաս-
ուած՝ մեծ հիւանդութիւն. կարմիր՝ տենդ
կամ կաթուած. երբ կեանքի գիծէն սկսի
կը յայտնէ թէ ենթական շուտ կը նուա-
ղի, երբ մինչեւ Երեւակի բլուրը բարձ-
րանայ կը նշանակէ խոր ծերութիւն. երբ
Հուանի բլուրին մէջ միանայ գլխու գծին՝
դիւրահաղորդ բնութիւն, երբ ճիւղաւո-
րումով վերջանայ Արամազդի բլուրը՝
ճամբորդութիւն: Այս գիծը միայն շատ
զուարթ, կայտառ, կեանքոտ մարդիկ
չեն ունենար:

ՆԱԽԱՏԵՍԱՌԹԵԱՆ ԳԻԾ (Տես պատ. 15)

Այս գիծը Հրատի դաշտէն կը սկսի .
աւելի յատակ է՝ նախաստեղծեան
յատկութիւնը ունեցողներուն քով և
անորոշ՝ չունեցողներուն քով: Երբ շատ մը
գիծեր ունենայ՝ կը նշանակէ ճամբորդու-
թիւն:

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԳԻՃ

Սիրոյ, ամուսնութեան (տ. պ. 6) գիծերը ճկոյթ մատին ստորոտը կը գտնուին Հերմէսի բլուրին տակ: Կտրատուած խր-զում նշանախօսութեան, մահուան պատ-ճառաւ: Բոլորակով մը՝ ապերջանիկ ամուսնութիւն: Շատ մը բոլորակներով՝ ազգականի հանդեպ սէր, սեւ բիծերով՝ այրիութիւն: Կտրատուած պզտիկ ուղղա-հայեաց գիծերով՝ ապերջանիկ ամուս-նութիւն:

Ամուսնութեան գիծին վրայ ճկոյթին տակը զուգահեռական գիծեր կը ցուցնեն զաւակներուն թիւը:

Յ. ՇՂԹԱՆԵՐԸ ԵՒ ԱՊՍՐԱՆՋԱՆՆԵՐԸ

‡ (Պատկեր 6)

Վէնիւսի շղթան (ցուցամատին և միջ-նամատին մէջտեղէն սկսուած բոլորակը մինչեւ մատնեմատ և ճկոյթ՝ նշան է կրֆոս, վաւառոս բնութեան: Երբեմն ալ ցոյց կուտայ նուրբ եւ դիւրազգած բնու-թիւն: Երբ կտրատուած ըլլայ՝ մատնեմա-տին մէջտեղ՝ շափազանցեալ հահոյճները պիտի կործանեն: Այս շղթան կը տես-

նուի շատ ատենն աչքի գիտութեամբ դրա-
դողներուն ձեռքին մէջ :


Ապարանջանները (տ. պ. 6) այն
գիծերն են որ կ'երեւին դաստակին վրայ :
Շատ որոշ լաւ նշան, երբ երեք հատ
կազմուի՝ իւր ծերութիւն, երբ ճիւղաւո-
րումներ ունենայ՝ պատիւ, վարձատրութիւն :
Երբ այս գիծերէն ծնունդ առնէ որոշ գիծ
մը, որ երկարի մինչեւ Արամազդ և Երե-
ւակ՝ եկեղեցական կոչում : Երբ մինչեւ
մատնեմատ երկարի՝ հարսութիւն : Իսկ
երբ զոյգ ըլլայ այս վերջին գիծը՝ հարս-
ութեան երեսէն ապերջանկութիւն : Երբ
այս ապարանջաններէն գիծ մը լուսնի
բլուրը երկարի, համբորդութիւն : Երբ
այս ապարանջանները գէշ կազմուած, ան-
կանոն ըլլան, գեռ բախտ, աղբատրութիւն :
Իւրաքանչիւր ապարանջան ցոյց կուտայ
30 տարի :

4. Ե Ա Ձ, Ս Ս Ճ Ղ, Բ Ա Ռ Ա Կ Ո Ւ Ս Ի, Վ Ա Ն Դ Ա Կ

(Տես պատ. 14)

Ձեռքին գլխաւոր գիծերէն զատ կը
գտնուին նաև շատ մը մանր և նուրբ ան-
նշան գիծեր, որոնք իրարու քով գա-
լով՝ խաչեր, աստղեր, քառակուսիներ և
պահարաններ կը կազմուին :





Երջանիկ մարդուն ձեռքը
Խոսքի ձեռք (Պատ. 16)

ԽԱՉԻ ՆՇԱՆՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Խորհրդաւոր խաչ կը կոչուի այն խաչը, որ ձեռքին ճիշդ մէջտեղը, սրտին և գլխուն գիծերուն մէջտեղ կը գտնուի: Ամուսնութեան գիծը ցուցամատին բլուրին վրայ կը գտնուի: Անոնք որ այս խաչը չունին, թող զխորհին ամուսնութեան վրայ, որ իրենց չպիտի բարեպատեն ըլլայ: Բթամատին բլուրին վրայ երբ գրանուի այս խաչը՝ միակ սէր մը: Երբ գրլխուն գիծին վրայ գտնուի՝ ուղեղային տեղ, նոյն իսկ ուղեղային ծանր հիւանդութիւններ: Երբ այս խաչը գտնուի կեանքի և առողջութեան գիծերուն վրայ՝ վրասնգալից հիւանդութիւն, Հերմէսի բլուրին վրայ՝ գիտութեանց կոչում, միևնոյն ժամանակ՝ աչքի գիտութեանց: Երբ այս խաչը սրտի գիծին մօտ ըլլայ՝ դրամական սագնապ: Մատնեմատին բլուրին վրայ խաչ մը՝ արուեստի սեղանաշոյն: Հրատի և կունի բլուրներուն մէջտեղը՝ դիւրի փոփոխում: Ապողոնի (մատնեմատին) մատին երրորդ մատնոսկրին վրայ երբ ըլլայ այս խաչը՝ անբիծութիւն: Բաղդի գծին վրայ՝ դրամական սագնապ: Երբ Արամազդի բլուրին վրայ ըլլայ՝ եր-

ջանիկ շամուսնութիւն : Երբ Ապողոնի
բլուրին վրայ՝ դժբաղդութիւն : Երբ դաս-
տակին ապարանջաններուն վրայ ըլլայ՝
անսպասելի հարսութիւն : Արամազդի
մատին երրորդ ագոյցին վրայ՝ գրական
յաջողութիւն : Կեանքի գծին և օրտի
գծին սկզբնաւորութեանը մէջ՝ դժբաղդ
մանկութիւն :

ԱՍՏՂԵՐՈՒՆ ՆՇԱՆՍԿՈՒԹԻՒՆԸ

Երբ ուշադրութեամբ քննենք ձեռք մը,
անկարելի է որ հոն չնշմարենք աստղի
ձեւով գծեր : Երբ ցուցամատին առաջին
մատնոսկրին վրայ ըլլայ՝ պերնախօսու-
թիւն : Երբ բթամատին առաջին մատնոս-
կրին վրայ՝ կնամոլութիւն, Երեւակի եր-
րորդ մատնոսկրին վրայ՝ քաղաքական կամ
գիւղըրական փառք : **Երբ** Արամազդի
բլուրին վրայ ըլլայ՝ երջանիկ ամուս-
նութեան մը շնորհիւ հարսութիւն : Երբ
այս աստղը գտնուի Լուսնի բլուրին վրայ՝
կը նշանակէ արկած ծովու վրայ : Աստ-
ղիկի բլուրին վրայ՝ դժբաղդ սէր : Երե-
ւակի բլուրին վրայ՝ արկած, վիրաւոր-
ուիլ : Երեւակի առաջին մատնոսկրին
վրայ՝ վսանգ, արկածալից մահ : Բթա-

մատին վրայ՝ եղունգին մօտ՝ գեղխու-
 թիւն: Հերմէսի բլուրին վրայ՝ սնանկու-
 թիւն՝ պասիւր արաւաւորող սխալ:
 Կեանքի գծին սկիզբը՝ անդամալուծու-
 թիւն: Բաղդի գծին վերջը՝ մօտալուս մահ:
 Բթամատին բլուրին վրայ, սիրային
 վիճ: Բթամատին բլուրին վերի ծայրը՝
 դժբաղդութիւն սիրոյ պատճառաւ:
 Նոյն իմաստ՝ երբ պտնուի բթամատին ա-
 ուաջին մանտակրին վրայ: Հրատի բլուրին
 վրայ՝ ճակատամարտի մեջ մահ: Երեւակի
 բլուրին վրայ՝ աղեսալի հպարտութիւն և
 անդամալուծութիւն: Գլխու գծին վրայ՝
 սիրոյ պատճառաւ գերութիւն: Հերմէսի
 բլուրին վրայ՝ գողութիւն: Երբ երկու
 աստղեր Հերմէսի առաջին մատնակրին
 վրայ ըլլան անուանարկիչ մահ:

ՔԱՌԱԿՈՒՄԻՆԵՐՈՒՆ ԻՄԱՍԵԸ

Քառակուսիները շատ անգամ մի միայն
 խոշորացոյցով կը նշմարուին: Հրատի դաշ-
 տին վրայ՝ քաջութիւն, բթամատին (Աստ-
 գիկին) բլուրին տակ՝ իսուր կեանք, ան-
 սեր, երբեմն ալ սպառնալիք, բանսար-
 կութիւն: Արամազդի բլուրին վրայ՝ պեր-
 ճախօսութիւն, գիտութեանց հակում: Ե-
 ղեւակի բլուրին վրայ՝ ջերմեռանդու-

թիւն : Ապողոնի բլուրին վրայ՝ քերեւա-
մսուրթիւն : Հրասի դաշտին վրայ՝ հակոււմ
ոնիրի : Բթամատի բլուրին վրայ՝ գեօ
բնուրթիւն : Լուսնի բլուրին վրայ՝ մելա-
մաղանսուրթիւն, քանասեղծուրթիւն, երկ-
չոսուրթիւն : Աքամազդի բլուրին վրայ՝ երբ
այս բարձր է՝ ամբարսաւանուրթիւն, բրո-
նակալուրթիւն :

ՎԱՆՎԱԿՆԵՐԸ ԵՒ ԻՐԵՆՑ ԻՄԱՍՏԸ

Վանդակ կ'անուանենք այն պզտիկ
գիծերը, որոնք վանդակորմի ձեւ կ'առ-
նեն : Երեւակի բլուրին վրայ՝ սխուր կեանք,
պարծենկոս բնուրթիւն : Հերմէսի բլուրին
վրայ՝ յուսախաբոււմ : Լուսնի բլուրին
վրայ՝ ձանձրոյթ, Ապողոնի բլուրին վրայ՝
սնապարծուրթիւն : Հրասի բլուրին վրայ՝
գեօ նկարագիր : Վանդակները միշտ ար-
գելիներ, սակնուվրայուրթիւն կը ցուցնեն :

ԱՆԿԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԵՌԱՆԿԻՒՆՆԵՐԸ

Չեւքը երեք գլխաւոր անկիւն կ'ու-
նենայ՝

1. Գլխու և կեանքի գիծին կազմած
անկիւնը :
2. Առողջութեան և բազդի գիծերուն
հանդիպումէն կազմուած անկիւնը :



Դժբաղդ մարդուն ձեռքը
Բոլոր գիծերը՝ գեշ կազմուշած, կսրս ջուշած (Պատ. 17)

3. Առողջութեան և գլխու գծին հան-
դիպումին անկիւնը :

Եռանկիւն կը կոչուի (տ. պ. 6)
կեանքի, գլխու, առողջութեան գիծե-
րուն կազմած մասը : Բառանկիւն կը
կոչուի սրտի և գլխու գիծերուն միջոցը :
Առաջին անկիւնը երբ լայն է՝ նշան է
մտացիութեան, ուժեղ, որոշ, բայց նեղ
զգայնութեան : Երկրորդ անկիւնը շատ
որոշ՝ լաւ առողջութիւն. սուր՝ կծծի եւ
հիւանդոս խառնուածք : Լայն երրորդը՝
երկարակեցուքիւն, բուժ՝ ջլախտութիւն
(névralgie), հազիւ որոշ՝ դիւրագգածու-
թիւն : Ա. Եռանկիւնը (տ. պ. 6՝ Գլխու և
կեանքի գիծերու միացման անկիւնը) շատ
որոշ՝ բարձր իմացականութիւն : Շատ լայն՝
ազնուականութիւն : Նեղ՝ մտային սկարու-
թիւն : Զեռքին շատ վարը՝ բուն, քմրու-
թիւն : Բ. Եռանկիւնը (տ. պ. 6՝ Առողջու-
թեան գիծին և Բաղդի գիծին միացման ան-
կիւնը) շատ լայն և կանոնաւոր՝ չափաւո-
րութիւն, սուր դասողութիւն : Նեղ՝ անուղ-
ղամտութիւն, խաբեութիւն, շատ մը գի-
ծերով՝ դասողութեան սկարութիւն : Շատ
մը պղտիկ գիծեր միանալով եռանկիւն-
ներ կը կազմեն, որոնք շատ կարեւոր
դեր մը կը խաղան : Ապողոնի բլուրին
տակ՝ արուեստի կոչում, Երեւակի առա-

ջին մատնուսկին վրայ՝ գեղխուքիւն,
 Հերմէսի բլուրին վրայ՝ դիւանագիտու-
 քիւն, քաղաքական կոչում: Գլխու գծին
 վերջաւորութեանը՝ պերնախօսութիւն, Հեր-
 մէսի բլուրին վրայ՝ գինուորական փառք:
 Լուսնի բլուրին վրայ՝ նախագագում, ար-
 քրնամսութիւն: Բթամատի բլուրին վրայ՝
 սիրոյ մեջ խոհեմութիւն: Ապարանջան-
 ներու վրայ՝ երկարակեցութիւն: Կեանքի
 գլծին վերջաւորութեանը՝ շասախօսու-
 քիւն:

Ե. ՈՒՐԻՇ ՆՇԱՆՆԵՐ

Ձեռքին մէջ կը նշմարուին նաև կը-
 լորներ, ճիւղաւորումներ, շղթաներ, կէ-
 տեր: Կլորները, խաչերը և ճիւղաւորում-
 ները (տ. պ. 14) երբ ձեռքին մէջ վեր կը
 բարձրանան՝ լաւ նշանակութիւն ունին և կը
 յայտնեն երջանկութիւն: Շղթաները միշտ
 նշան են պայքարի, արգելքի:



ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ


Նրջանիկ մարդուն ձեռք.— Դժբաղդ
մարդուն ձեռք.— Բանաստեղծին,
գործի մարդուն, փառասերին,
կծծիին, սերագործին ձեռքերը.—
Բաղդաւոր պիտի ըլլա՞ք.— Ա—
մուսնալուծուողին ձեռք.—
Սրտի հիւանդութիւնները:

ԻՆՉ ՉԵՌՔ ԲԻՆԻՔ

1. Նրջանիկ մարդուն ձեռք

(Տես պատ. 6)

Այս ներդաշնակ ձեռքին մէջ կը տես-
նանք կեանքի գիծը երկար, շատ որոշ,
որ կը ցուցնէ պատուական առողջութիւն
և երկար կեանք, Արամազդի մատին քո-
վէն կը սկսի, ինչ որ է՛ն բազմալի ճա-
կատագիրը կը ցուցնէ: Գլխու գիծը իրեն
զուգահեռական գիծ մը ունի, ասիկա կը
յայտնէ հարստութիւն, սրտի գիծը հիա-
նալիօրէն որոշ է և դորովալից բնութիւն
մը կը յայտնէ, հաստատուն սիրտ մը ա-



Գործի մարդուն սեռեր
Գառակուշի մասեր, բոլոր զիծերը դեպի Հերմիտի բնակարան կ'ուղ-
ղուին՝ որոշորհն (Պատ. 18)

ուղղութեան և սիրոյ տեսակէտով :
 Բաղդի գիծը դաստակէն կը սկսի և շատ
 որոշ կը յառաջանայ Արամազդի բլուրը,
 այս երջանիկ կեանքը փառքն ալ պիտի
 ճանչնայ : Երեք ապարանջաններն ալ կը
 յայտնեն խոր ծերութիւն մը , Արամազդի
 բլուրին վրայի խաչը ցոյց կուտայ երջա-
 նիկ ամուսնութիւն մը : Աստղիկի բլուրին
 վրայի խաչը կը յայտնէ թէ այս տէրը
 միակը պիտի ըլլայ և Արամազդի բլուրին
 վրայի աստղը ցոյց կուտայ թէ այս ամուսնութիւնը
 աւելի բարեբախտ պիտի ընէ կըորիկ հարստութիւն մը :

Չ. Դժբախտ մարդուն ձեռքը
 (Տես պատ. 17)

Այս քառակուսի և տգեղ ձեռքին մէջ
 կը տեսնենք ճակատագրին ամէնէն աղէ-
 տալի նշանները : Կեանքի գիծը իր տեւո-
 ղութեան կիսուն կը կտրուի . ասիկա կը
 յայտնէ 30-35ին մէջ մահ : Սաչ մը որ այս
 գիծին վրայ կ'երեւի , կը յայտնէ թէ ո՛ր-
 քան կարճ , ա՛յնքան ալ դժբաղդ պիտի ըլ-
 լայ : Գլխու գիծը որ Երեւակին տակ կանգ
 կ'առնէ , կը հաստատէ կեանքի գիծին
 գուշակածը : Սրտի գիծը նոյնպէս կարճ
 մտաւլուտ մահ մը ցոյց կուտայ : Այս գի-

ծը օղակ օղակ է, ինչ որ ցոյց կուտայ թէ սրտի բարասխուճմներէ կը տառապի: Այս տառապանքներէն զատ իր սէրերն ալ երջանիկ չեն, որովհետեւ կը տեսնենք շատ մը մանր գիծեր, որ կը կտրատեն սիրտի գիծը: Բաղդի գիծը երեւակի բլուրին տակ շատ մը գիծերով խաչաձեւուած է, ասոնք իր յուսախաբուճմներն են:

Արեւու գիծ չկայ: Առողջութեան գիծը շատ տեղերէն կտրատուած է, գէշ կազմուած ապարանջանները կը յայտնեն աղքատութիւն: Կեանքի և գլխու գիծին վրայի սեւ կէտերը կը յայտնեն ծանր հիւանդութիւններ: Լուսնի բլուրը հորիզոնական գիծեր ունի, ինչ որ կը յայտնէ դժբաղդ և անհանգիստ կեանք:

Բանաստեղծի մեծք

Ապողոնի մատին արտաքոյ կարգի երկայնութիւնը մեզ կը յայտնէ թէ արեւատներն են որ կը տիրապետեն մատներն երկայն են ու սրածայր, ասոնք մատներն են մտաւորականին, արուեստագէտին, բանաստեղծին: Լուսնի բլուրը բարձր, ինչ որ կը ցուցնէ բանաստեղծական երեւակա յուժիւն: Սիրտի գիծը շատ

որոչ է և ունի ճիւղաւորումներ՝ որոնք մինչեւ Արամազդի բլուրը կը յառաջանան՝ այս բանաստեղծը սիրոյ մէջ ալ երջանիկ պիտի ըլլայ: Առողջութեան գիծ չունի, բայց Աստղիկի շղթան շատ որոշ կը յայտնէ սիրող և դիւրազգած հոգի մը: Խորհրդաւոր խաչը սիրտի և գլխու գիծին մէջտեղ կը յայտնէ թէ՛ այս արուեստագէտը հանրութեան առջեւ մեծ պատիւ պիտի վայելէ:

4. Գործի մարդուն ձեռքը

(Տես պատ. 18)

Մատները քառակուսի են, կ'ապացուցանեն՝ կարգապահութիւն և ճշգրտահութիւն: Հերմէսի լեռը որոշ և է՛ն բարձր, դրամի սէր: Ամէն գիծերը Հերմէսի լեռը կ'ուղղուին, բայց միշտ չպիտի երջանիկ ըլլայ իր գործերուն մէջ. գէշ աստղ մը Հերմէսի վրայ՝ կը յայտնէ թէ՛ այս ձեռքին տէրը պիտի սնանկանայ:

5. Փառաստիւն ձեռքը

Արամազդի մատը Երեւակի մատին չափ երկար՝ ամենամեծ փառասիրութեան նշան է: Խոր գիծ մը ցուցամատը կը կտրէ վերէն վար, պատուի ծարաւը փա-



Ամուսնալուծուող ձեռք

**Քրտնաշին արմատին վրայ պզտիկ սասղ մը որ Գլխի գիծին վր
ուրիշ սասղի մը էր միանայ գիծով մը, կը ցուցնէ ամուսնուրթի
յետոյ խզում: (Պատ. 19)**

ոստիբուծիւնը պիտի ըլլայ այս մար-
 դուն կեանքին նպատակը: Բազդի գիծը
 շատ որոշ կը յայտնէ յաջողութիւն: Այս
 փառասէրը հարուստ աճուանութիւն մը
 պիտի կնքէ. Արամազդի բլուրին խաչը
 այդ կը յայտնէ: Գլխու գիծը երբ կեանքի
 գիծին վրայէն սկսի, և ճիւղաւորումով
 մը միանայ բազդի գիծին, այս փառա-
 սասէրը միշտ հաւատք պիտի ու-
 նենայ իր բազդին վրայ և երբէք սէր մը
 չպիտի դիմար հուսածէ: Վերջապէս, կեանքի
 գիծը երբ ճիւղաւորումներով կ'ընթանայ
 դէպի Գլխու գիծը, կը յայտնէ թէ
 յուսախարում չպիտի կրէ երբեք այս ձեռ-
 քին տէրը:

Ե. Կծծիին ձեռք

Առանց սրտի գիծի, ատոր, հակառակ
 շատ որոշ և բարձր Հերմէսի բլուր մը,
 մատները դէպի ասիը հակած են և բթա-
 մատը ձեռքին հետ սուր անկիւն մը կը
 կազմէ: Ապոդոմի մատը ասիին մէջ որոշա-
 պէս ծուած է: Գլխու գիծը երբ ձեռքին մէկ
 ծայրէն միւսը ընթանայ և ճիւղաւորու-
 մով մը Լուսնի բլուրը կ'ուղղուի, կծծին
 երկաթէ կամքի տէր է և ստակ շահելու
 ամէն միջոց լաւ է իրեն համար:



Սիրսի հիւանդութիւն ունեցողին ձեռք, որ սիր
զիծէն կը յայտնուի (Պատ. 20)

7. Ոճրագործի նեոքր

Կարճ մատներ, կծկուած, գնդակի ձե-
 ւով բթամատ մը, քիչ գիծերով և բոլոր
 լեռները տափակ: Կեանքի գիծը երբ կարճ
 է, գլխատուժ կամ թիապարտութիւն:
 Գլխու գիծն ալ երբ կարճ է, և պատառա-
 քաղի ձեւով վերջանայ, կը յայտնէ
 խարէութիւն ու ոճիր: Հրատի դաշտին
 մէջ գտնուող խաչը կը յայտնէ թէ ոճիրը
 իր պատիժը պիտի ունենայ: Սիրտի գիծը
 շատ կարճ՝ կը յայտնէ անգթութիւն:
 Հերմէսի գիծը շատ բարձր, վրան աստ-
 ղով մը և նոյնին առաջին մատնոսկրը
 աստղով մը, ցոյց կուտայ թէ այս ոճրա-
 գործը նաև հասարակ գող մըն է:

8. Բաղդ պիտի ունենա՞ք

Տեսէք սա վայելուչ ձեռքը (Պ. 6)
 ներդաշնակ գիծերով, բաղդատեցէք ձե-
 րիններուն հետ, եթէ կ'ուզէք հասկնալ
 թէ ո՞ր աստիճան բաղդաւոր էք: Այս
 ձեռքը մեզ ցոյց կուտայ պատկերը կա-
 տարեալ երջանկութեան, հանդարտ եւ
 քաղցր կեանքի, անվիշտ և անամպ:


Գլխու գիծը ճիւղաւորումներով սկըս-
 ուած և վերջացած՝ մեզ կը յայտնէ հզօր

իմացականութիւն մը, Արեւու գիծը շատ
խոր՝ կ'երկարի մինչեւ կեանքի գիծը,
կը յայտնէ յաջողութիւն ամէն ձեռ-
նարկի մէջ: Սիրտի գիծը հիանալիօրէն
որոշ է: Արամագղի բլուրին վրայ որոշ խաչ
մը կը յայտնէ երջանիկ սէր մը, երջանիկ
ամուսնութեամբ: Կեանքի զոյգ գիծը կը
յայտնէ երկար կեանք մը: Եւ վերջապէս
այս գիծէն մինչեւ ճկոյթը երկարող գիծը
ցոյց կուտայ մեզի հաստատուն կազմուածք
մը: Ընթերցող և ընթերցողուհի՛, ձեզի
կը մտղթենք նման ձեռք մը:

Գ. Ամուսնալուծուողի ձեռք

Տեսէք պատկերը. բխամատին բը-
լուրէն մինչեւ Գլխուն գիծին մօտ միակ
գիծ մը կ'երկարի երկու կողմերը աստղե-
րով: Ձեռքը ինքնին ամէնէն պարզ եւ
որոշ ձեռքն է: Բխամատին բլուրը կը
կրէ ընտանեկան վիշտերու բոլոր արատ-
ները, Հանկէ առաջ եկած գիծերը երբ
կտրատուած չըլլան՝ կը նշանակէ թէ
վիշտերը դարմանելի են. միմիայն աստ-
ղերն են որ կը յայտնեն անդառնալի խը-
զում: Ընթերցողնե՛ր, ու շաղրութեամբ
քննեցէք ձեր նշանածներուն ձեռքերը, եթէ
գտնուին այս աստղերը, զգուշացէ՛ք:

ԲՆՈՒՆ ԳՐԱՅԻՆՆԵՐԻՆ՝ ԿԱՐԵՆ ԵՒ ԿԱՐԾՐ ԵՊՈՒՆԳ ԿՈՒՆԵՆԱՆ, ՓԱՆԱՄՈՅԻՆԵՐ ԵՒ ՆԱՐԵՐ՝ ԿԱՐԾՐ ԵՒ
ԿՈՐ, ԵՊՈՒՆԳՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԿԵՏԵՐ՝ ՉՂԱՅՈՒՐՔԻՆ, ՎԱՐԳԱՉՈՅԻՆ՝ ՄԱՏՆԵՐ ԽՈՂՅՈՒՐՔԻՆ ԵՒ ԲԱՐՈՒՐՔԻՆ:



ԻՐԱՐՈՒ ՄՈՍ՝ ԳՄՈՏՆԱԿՆԵՐՔԻՆ ԵՒ ԽՆՎԱԿԱՍԻՐՈՒՐՔԻՆ:
ԻՐԱՐՈՒ ԱԵՐՈՒ ՄԱՏՆԵՐ ԿՐ ԳՆԳՆԵՆ՝ ՔԵՔԵՆԱՄՈՒՐՔԻՆ, ԱՅՏԱՐՐՈՒՐՔԻՆ, ԵՍՍՈՒՐՈՒՐՔԻՆ,
ԻՐԱՐՈՒ ՄՈՍ՝ ԳՄՈՏՆԱԿՆԵՐՔԻՆ ԵՒ ԽՆՎԱԿԱՍԻՐՈՒՐՔԻՆ:

10. Սիրտի հիւանդութիւն ունեցողին ձեռքը

Երբ Սրտի գիծը անեղծ է, առանց ա-
րատի, և իր երկայնութիւնը չափազանց
չէ, կը նշանակէ լաւ արեան շրջան մը,
հետեւապէս՝ առողջ սիրտ մը առանց վը-
տանգաւոր խանգարումներու: Բայց եթէ
ընդհակառակն շատ խոր է, կարմիր բի-
ծերով, կը նշանակէ սիրտի հիւանդու-
թիւն մը որ ժառանգական է: Հիւանդու-
թիւն մը քիչ վտանգաւոր, եթէ Սիրտի
գիծը կէս ճամբան մնացած չէ: Բայց եթէ
Սիրտի գիծը Գլխու գիծին շատ մօտ է
միացած՝ ասիկա նշան է յանկարծական և
չարաչար մահուան երակախոզումով: Ահա
այդ տեսակ ձեռքի օրինակ մը, մասները
բարակ, կեանքի գիծը միջակ երկարու-
թեամբ, Սիրտի գիծը, Գլխու և կեանքի
գիծերը միեւնոյն կէտէն կը սկսին: Սիր-
տի գիծը հիւանդոտ խորոթեամբ մինչեւ
ձեռքին երեսը կը շարունակուի, ինչ որ
կը յայտնէ գործարանական տագնապներ:



ՋԵՌՆԱՀՄԱՅՈՒԹԵԱՆ

ՊԶՏԻԿ ԲԱՌԳԻՐՔԸ

ՋԵՌՔԻՆ ԲՈԼՈՐ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ ՊԱՐԶՈՒԱԾ

Մեր ընթերցողներուն գիւրութիւն ըն-
ծայելու համար, այս պատիւ բառ գիրքին
մէջ ամփոփած ենք այբուբենական կար-
գաւ բոլոր թերութիւնները, յատկու-
թիւնները, նկարագիրը, ներքին զգացում-
ները մասնանշող նշանները:

Ա.

Անբծութիւն. — Նուրբ մատներ, ա-
փին մէջտեղ խաչ մը, նոյնպէս մատնեմա-
տին երրորդ մատնոսկրին վրայ, քառակուսի
մըն ալ բթամատին բլուրին վրայ:

Առեւտրականութեան յարմարութիւն.
— Ուռած մատներ, քառակուսի մատներ,
կարճ եղունգներ, Հերմէսի լեռը - բարձր,
Գլխու գիծը շիտակ՝ գէպի Հերմէսի լեռը
ուղղուած ճիւղաւորումներով, ճկոյթը՝
երկայն:

Անգրութիւն. — Բանի ձեւով մատ-

ներ, բթամատը կուստ, ցուցամատը շատ
երկայն, բթամատի լեռը տափակ, Սիրտի
գիծը միջնամատէն սկսած՝ խոր եւ կար-
միր:

Անկարգու թիւն. — Թոյլ ձեռք, սրա-
ծայր մատներ՝ նուրբ ազոյցներով, երկայն
եղունգներ նշաձեւ, Գլխու գիծը ճկոյթ
մատնէն սկսած և միջամատին տակ վեր-
ջացած:

Ալֆոլականու թեան յարմարութիւն. —
Գլխու գիծը կեանքի գիծէն բաժնուած
սկիզբէն: Առողջութեան գիծը կարմիր:
Գլխու գիծին տակ աստղ:

Արկած (ջուրի մէջ). — Կուսնի լերան
վրայ պղտիկ աստղ մը նշան է՝ մահուան
վտանգ ծովու մէջ:

Անպատկառ (բնութիւն). — Կարճ ե-
ղունգներ, շատները լայն իրենց սկզբնաւո-
րութենէն, երկրորդ մասնոսկրը բթամատէն
շատ լայն: Պղտիկ գիծերը նուազ: Բթա-
մատին լերան վրայ վանդակ:

Անհաւատարմութիւն. — Նուրբ մատ-
ներ, Հերմէսի մատը (ճկոյթ) շատ կարճ,
Գլխու գիծը շիտակ, և կեանքի գիծէն
շատ հեռացած:

Անկախ, ազատ մտայնութիւն . — Սիրտի գիծը շատ որոշ և հեռադհեռէ բարձրացած, Գլխու գիծը և կեանքինը իրարմէ հեռու, քառակուսի մասններ, Արամազդի լեռը քիչ բարձր :

Ամուսնութիւն (երջանիկ) . — Արամազդի լեռան վրայ խաչ մը, Բաղդի գիծը շատ որոշ, Լուսնի լեռնէն գիծ մը սիրտի գիծին վրայ վերջացած :

Ամուսնութիւն (դժբաղդ) . — Ամուսնութեան գիծը ծուռ ու մուռ կամ օղակաւոր : Այս գիծը պէտք է փնտռել բժամատի բլուրէն Արամազդի բլուրը :

Արդուզարդի սէր . — Սրածայր և երկայն մասններ, նշաձեւ եղունգներ, բժամատի (Աստղիկին) լեռը շեշտուած, մասնեմատին լեռան վրայ քառակուսի : Գլխու գիծը հազիւ գծուած :

Այրիութիւն . — Սիրտի գիծը կտրատուած պղտիկ ուրիշ գիծերով, Բաղդի գիծը Սիրտի գիծին վրայ վերջացած :

Ր.

Բարութիւն . — Արամազդի լեռը լաւ կազմուած, Սիրտի գիծը շատ որոշ և երկայն : Աստղիկի լեռը բաւական բարձր, Բաղդի գիծը կեանքի գիծին քովէն սկսած :

Բարեացակամ բնութիւն.—Կնճիռներով լեցուն ձեռք, բխամատը գէպի դուրս հակած, Արամազդի լեռը բարձր և այս մատը բաւական երկայն: Սիրտի գիծը երկայն և որոշ: Բխամատին լեռը բարձր:

Բարկութիւն.—Լայն ձեռք, ափը շատ մը գիծերով, մատները շեշտուած բահի ձեւով, յաճախ եղունգները կրծուած, Արամազդի մատը (ցուցամատը) շատ երկայն, Հրատի լեռը բարձր, Գլխու գիծը կեանքի գիծէն բաժնուած սկիզբէն, սիրտի գիծը խոր և գունաւոր: Հրատի դաշտին մէջ խաչ մը կամ վանդակ մը:

Բաղդաւորութիւն.— Բաղդի գիծը շատ որոշ և շիտակ: Արամազդի լեռան վրայ աստղ: Դաստակը երեք ապարանջաններ, լաւ կազմուած: Երբեմն ալ խաչ մը այս գիծերուն վրայ: Մատներմատին լեռան վրայ հորիզոնական երկու գիծեր և կամ երեք որոշ գիծեր երեքժանի կազմած: Սասնային երեքժանին, որ ճշմարիտ յաջողութիւն մը ցոյց կուտայ կեանքին մէջ:

Բնագղ (գէշ).—Ծուռուծուռ մատներ, թոյլ ձեռք, Սիրտի գիծը շատ լայն,

գլխու գիծը երեքժանիով վերջացած :
 Բթամատին լեռը բարձրացած : Ափը վան-
 դակներով ծածկուած : Աստղիկի շղթան
 զոյգ և երբեմն երեք :

Բղջախոհութիւն . — Լայն , կարե ձեռ-
 քեր , տափակ լեռն եր , բացի Աստղիկի
 լեռնէն՝ այս լեռան վրայ վանդակներ :
 Կարճ բթամատ , Աստղիկի շղթան զոյգ
 կամ երեք հատ :

Բոնակալութիւն . — Երկայն ձեռքեր
 եւ նեղ , Արամազդի լեռը շատ երկայն :
 Կեանքի գիծը և Սիրտի գիծը իրարմէ հե-
 ոու սկսած : Հրատի լեռը շատ որոշ :
 Բթամատին երկրորդ մատնակրը շատ եր-
 կայն : Արամազդի լեռան վրայ քառա-
 կուսի մը :

Բալդի չգոյութիւն , խեղճութիւն . —
 Սրտի գիծի բացակայութիւն , գէշ կազ-
 մուած կամ խորտակուած , Երեւակի լե-
 րան վրայ շատ մը իրար խաչաձեւող գի-
 ծեր , Կեանքի գիծը շատ մը ուրիշ խաչա-
 ձեւ գիծերու մէջ կորսուած , Ապողոնի
 լեռը ծածկուած պզտիկ գիծերով :

Բանասեղծութիւն . — Երկայն ձեռ-
 քեր՝ սրածայր մատներով : Լուսնի լեռը
 բարձրացած և քառակուսի մը վրան : Ա-

բեւու գիծը շատ քոշ : Ապողոնի մատը
Արամագղինէն աւելի երկայն :

Բանսարկու թեան վսանգ .— Երեւակի լեռը շատ մը ուրիշ գիծերով ապօրուած :

Գ.

Գործնական ոգի .— Գէյ՝ ձեռքեր, կարճ մատներ, Լուսի լեռը տափակ և նեղ, Կեանքի գիծը լայն, կարճ բթամատ :

Գիտութեանց հակուս .— Բահի ձեւով մատներ, Հերմէսի լեռը կազմուած եւ Հերմէսի մատը երկայն : Յօդաւորումները կուենտ, բթամատին առաջին մատնոսկրը լայն, Գլխու գիծին վերջաւորութիւնը եռանկիւն կազմած :

Գլխու ցաւ .— Կեանքի գիծը օղակաւոր, առողջութեան գիծը անկանոն և պղտիկ գիծերով կտրատուած :

Գորով .— Ատողիկի լեռը որոշ, մատնեքուն ներքին կողմի վերջաւորութիւնը ուռած : Պղտիկ գիծ մը ուղղահայեաց կերպով Սիրտի գիծը կտրած՝ իր վերջաւորութեանը :

Գինովութիւն .— Հրատի լեռան գիծերը շատ գունաւոր : Կեանքի գիծը կարմիր :

Գիւժհակում .— Հաստատ ձեռք , քառակուսի մատներ , Հերմէսի լեռը բարձր և այս մատը շատ երկայն , Հերմէսի երկրորդ մատնուկը շատ երկայն և ուղղաձիգ գիծով մը : Գլխու գծին վրայ ձեռմակ արատներ :

Գ.

Գիւանագիտութիւն .— Ծկուն ձեռքեր , քառակուսի մատներ , Գլխու գիծը ժանիքով վերջացած :

Դասող միտք .— Քառակուսի մատներ , բիթամատին երկրորդ մատնուկը առաջինէն աւելի երկայն : Հերմէսի լեռը երկայն : Ապողոնի լեռը որոշապէս գծուած : Սիրտի գիծը լաւ գծուած :

Գիւրագգաժութիւն .— Սրածայր բիթամատ : Մատները շատ մը գիծերով :

Ե.

Նկեղեցականութեան հակում .— Երեւակի լեռը բարձր , Արամազդի մատը շատ երկայն : Սիրտի գիծը Երեւակի լեռան տակ վերջացած :

Նասիրութիւն .— Չգոյութիւն Սիրտի գիծին երկու ձեռքերէն մէկուն կամ եր-

կու ձեռքին մէջ ալ : Առողջութեան գիծը
գունաւոր : Բթամատը երկայն , կեանքի
և Գլխու գիծերը բաւական մը իրարու
միացած : Արամազդի մատը երկայն :

Նրեւակայութիւն .— Լուսնի լեռը կազմուած է գիծերով , այս լեռան վրայ խաչ մը , Գլխու գիծը Լուսնի լեռան վրայ հակած և առողջութեան գիծին հետ խաչ մը ձեւացնելով :

2.

Չուարթ բնութիւն .— Ճկոյթը երկայն , Աստղիկի լեռը կազմուած , Արամազդի լեռը շատ սրուշ , Ապողոնի լեռը և Հերմէսինը իրարու գրեթէ միացած :

Չգայնոսութիւն .— Ափը գիծով լեցուն , բարակ մատներ , Գլխու գիծը կեանքի գիծէն բաժնուած : Աստղիկի լեռան վրայ ճիւղաւ որում :

Չինուորականութեան կոչում .— Կարծր ձեռքեր , լայնցած մատներ (բահի ձեւով) , Հրատի լեռը և դաշտը՝ բարձր , Գլխու գիծը երկայն և խորունկ , Բաղդի գիծը Հրատի դաշտէն սկսած , կեանքի և Գլուխի գիծերը իրարմէ հեռու սկսած :

Չգայութիւն .— Երկայն և նուրբ

ձեռքեր, Լուսնի լեռը բարձր, Սիրտի գիծը Արամազդի և Երեւակի մատներուն մէջտեղէն սկսած: Մատներուն ներքին ծայրերը ուռած:

Ը.

Ընսանեկան սեռ, կարգապահ ոգի.—
Քառակուսի մատներ, լայն յօդաւորում:

Թ.

Թռուառուքիւն.— Շատ մը բարակ գիծեր, երբ բթամատի բլուրէն կանգ կ'առնեն Գլխու գիծ, ն վրայ՝ դրամական թըշուառութիւն, իսկ երբ Սրտի գիծին վրայ կանգ կ'առնեն՝ սէրէ յառաջ եկած դրժբազդութիւն:

Թասրոնի սեռ, դերասանութեան հակում.— Երկայն մատներ, նուրբ և սրածայր, ճկոյթը երկայն, Արամազդի և Հերմէսի բլուրը բարձր:

Ժուժկայութիւն, ճնտասագիտութիւն.— Կարճ և քառակուսի մատներ: Բթամատը ձեռքին մէջ հակած: Գլխու գիծը Հերմէսի լեռը բարձրացած, Գլխու և Սիրտի գիծերը երկայն և շատ նուրբ:

Ի.

Իրաւագիտութեան կոչում. — Երկայն մատներ և նեղ, բթամատը և ձկոյթը երկայն, Արամազդի և Հերմէսի լեռները բարձր, Սրտի գիծը երկայն և որոշ, Բաղդի գիծը Արամազդի լեռը բարձրացած: Լուսնի լերան վրայ խաչ:

Խ.

Խառնուածք բաղդախնդիրի. — Կարծր ձեռքեր, բանի ձեւով մատներով, բթամատը երկայն, ցուցամատը երկայն, միջնամատը բանի ձեւով, Հրատի լեռը բարձրացած, Գլխու գիծը կեանքի գիծէն բաժնուած սկիզբէն: Սրտի գիծը խոր: Լուսնի լերան վրայ կամ Հրատի դաշտին մէջ խաչ:

Խիս խառնուածք. — Երկրորդ մատնոսկրը բթամատին լայն և կարճ, Արամազդի մատը երկայն, բթամատին բլուրը տափակ, Գլխու գիծը շատ որոշ և շիտակ, Սրտի գիծը Երեւակի բլուրին տակէն սկըսած:

Խանդավառութիւն. — Սրածայր մատներ, մատնեմատը շատ երկայն, Արամազդի լեռը լաւ կազմուած, երկայն մատներ նրբածայր:

ԽԵՆԴՈՒՅԻՆ . — Սրածայր մատներ ,
 Գլխու գիծը լուսնի լեռան վրայ հակած
 խաչով և ք :

ԽՈՒՆԻՆՈՒՅԻՆ . — Մատները որոշ յօ-
 դաւորումներով , լեռները լաւ կազմուած ,
 բթամատին առաջին մատնակը լայն :
 Կեանքի գիծը և Գլխու գիծը իրարու
 միացած :

ԽԱՊԱՄՈՂՈՒՅԻՆ . — Միջնամատը և
 մատնեմատը միեւնոյն երկարութեամբ :
 Գլխու գիծը շատ բարակ և մինչև ճկոյ-
 թի լեռը բարձրացած :

Ն .

ԾՈՒՂՈՒՅԻՆ . — Թոյլ և խորունկ ձեռք ,
 առանց Արամազդի բլուրի : Լուսնի լեռը
 տարածուն :

ԾԱՊՐՈՂԻՆ . — Մատնեմատը սրածայր ,
 բթամատին և Արամազդի լեռը անորոշ :
 Սրտի գիծը նեղ :

Լ .

ԿՆԱՄԷԺԱՐՈՒՅԻՆ . — Կնճիռներով լե-
 ցուն ձեռք , քառակուսի մատներ , Աստ-
 ղիկի լեռը կազմուած , Սրտի գիծը եր-
 կար և որոշ :

ԿԵՂԾԻՖ . — Սրածայր մատներ , նշաձեւ
 եղունգներ , Գլխու գիծը ժանիքով վեր-

Զացած, նեղ քառանկիւն, բաղդի գիծը
կտրատուած:

Կոճութիւն.— Կարճ, թանձր մատներ,
կարճ եղունոց, թանձր ասի, բթամատին
երկրորդ մատնոսկրը լայն, Սրտի գիծը
միջնամատէն սկսած:

Կամֆի գօրութիւն.— Գլխու և կեանքի
գիծերը իրարմէ անջատուած, թանձր
ձեռքեր, բթամատը թանձր և երկայն,
Հերմէսի լեռը ուռած, Հրատի լեռը կազ-
մուած, Գլխու գիծը խորունկ և շատ
որոշ:

Հ.

Համարձակ, խիզախ բնութիւն.—
Կարծր ձեռքեր բազմաթիւ գիծերով,
լայնցած մատներ, ցուցամատը երկար,
Հրատի և Հերմէսի լեռը բարձր, Գլխու
գիծը կեանքի գիծէն անջատ սկսած:

Հեսաբրութիւն.— Նուրբ մատներ,
մատնեմատին բլուրբ տարածուն և մա-
տին շատ մօտէն սկսած:

Հիւանդութիւն, սկարութիւն.— Կեանքի
գիծը տեղոյն և օղակաւոր: Սիրտի
գիծը պզտիկ բոլորակներով: Կեանքի գի-
ծը խաչով մը վերջացած: Առողջութեան
գիծը կտրատուած:

Հպարտութիւն.— Արամազդի բլուրբ

կազմուած, գլխու գիծը կեանքի գիծին վրայէն սկսած: Արամազդի մատը Ապո- ղոնի (մատնեմատի) մատէն կարճ:

Հարսու թիւն.— Բազդի գիծը շատ որոշ և խորունկ և Արամազդի բլուրին վրայ հակած:

Հիւանդ (խառնուածք).— Օղակաւոր կեանքի գիծ, առողջութեան գիծը անկա- նոն, կեանքի գիծը կտրուած՝ կը նշա- նակէ ծանր հիւանդութիւն մը և կտրուած տեղէն կը հասկցուի ո՛ր տարիքին հիւան- դութեան պատահիլը:

Հիւանդութիւն սրտի.— Սրտի գիծը օղակաւոր կամ կարմիր բիծերով: Երբ սրտի գիծը գլխու գծին միացած սկսուած է՝ կը նշանակէ յանկարծական և սոսկալի մահ:

Հիւանդութիւն լեարդի.— Առող- ջութեան գիծը գեղնած, նոյնպէս Գլխու գիծը:

Հիւանդութիւն կուրծի.— Ճերմակ ձեւքեր, կեանքի գիծը կտրատուած, ե- ղունդները կոր:

Հիւանդութիւն արեան.— կեանքի գիծը կարմիր, մանաւանդ Գլխու գծին սկիզբէն. այս պարագային կը վախցուի կաթուածէ:

Հիւանդութիւն ջղային.— Ափը մանր
և բազմաթիւ դիժերով, փոթ փոթ ձեռ-
քեր, Լուսնի լեռը հոյնալէս գիժերով,
Կեանքի գիծը աստղով մը վերջացած :

Հիւանդութիւն շնչեռակային գործա-
րանագ.— Կեանքի գիծը Գլխու գծին վրայ
հակած :

Համեստութիւն.— Հրատի լեռը հաղիւ
որոշ : Գլխու գիծը դէպի Սրտի գիծը բար-
ձրացած : Մատերը դէպի ափը հակած՝ երբ
ձեռքը շատ բացուի :

Հմուկ, հնազանդ բնութիւն.— Սրտի
գիծը դէպի Գլխու գիծը հակած : Նեղ ձեռ-
քեր

Հպարտ, ամբարսաւան բնութիւն.—
Կեանքի և Գլխու գիծերը իրարմէ անջատ
սկսած : Արամազդի լեռը շատ տարածուն :
Արամազդի լեռը շատ երկայն : Արամազդի
լեռան վրայ քառակուսի մը :

Հեշտասիրութիւն.— Բթամատին բլուրը
կազմուած և ծածկուած պզտիկ գիժերով :
Թոյլ ձեռքեր :

Հպասակութիւն.— Բթամատին բլուրը
բաւական բարձր, ափին քառանկիւնը տա-
րածուն :

Հակամէտ սիրութեան.— Միջնամատի
բլուրի բացակայութիւն, Լուսնի բլուրը

կաղմուած, միջնամասը երկայն, Գլխու
գիծը ափին մէջ հակած:

Հողագործութեան սրամադրութիւն.—
Բահի ձեւով մատներ, հաստատուն ձեռ-
քեր, բթամասը համեմատաբար շատ մեծ
միւս մատներէն: Ափը թանձր և լայն:

Ճ.

Ճղնիւմ, ագահ, կծծի բնութիւն.—Չոր,
ոսկրուտ ձեռքեր, նիհար, ծուռ ու մուռ
մատներ, մանաւանդ երրորդ մատնու-
կրերը: Կեանքի և Գլխու գիծերը միեւնոյն
տեղէն սկսուած: Լեռները տափակ՝ բացի
ձկոյթինէն: Երեւակի լեռը գիծերով: Ա-
ռողջութեան գիծը երկար և շատ ո-
րոշ: Սրտի գիծը բացակայ, կամ այս
գիծը միացած գլխու գծին և կամ մատնե-
մատին ու ձկոյթին մէջտեղ կարուած:
Բթամասը գէպի ափը հակած:

Ճապար, սիւսար միսք.—Լուսնի և Ա-
պոդոնի (մատնեմատ) լեռան բացակայու-
թիւն, գլխու գիծը քիչ որոշ և պզտիկ
գիծերով սկսուած, գլխու գիծը շատ հե-
ռացած կեանքի գիծէն:

Ճակասագրային ձախորդութիւն (կամ
գծբաղդութեան վտանգ).— Երեւակի լե-
ռան բացակայութիւն, Սրտի գիծը այս
մատին տակէն չսկսած, Հրատի դաշտը

առանց գիծի, Կեանքի գիծը գէպի Լուսնի
բլուրը յառաջացած: Միջնամատին տակ
քառակուսի մը:

Ճարպիկուքիւն.— Քառակուսի և եր-
կար մատներ, կարճ եղունգներ, Գլխու
գիծը ժանիքով վերջացած:

Ճարսասանուքիւն.— Ճկոյթը շատ եր-
կայն, գիծ մը այս մատը երկարած, Ա-
րեւու գիծը Հրատի դաշտէն երկարած:

Ճամարսասիրուքիւն.— Կարծր ձեռ-
քեր, քառակուսի մատներ՝ կուլնա յօդա-
ւորումներով, Սրտի և Գլխու գիծերը շատ
որոշ: Քառանկիւնը՝ լայն: Լայն բթամատ:

Ճամբորդուքիւն.— Կեանքի գիծէն երբ
գիծ մը Լուսնի լեռը երկարի, բաղդի գի-
ծը հոնկէ սկսելով: Դաստակի ապարան-
ջաններէն գիծեր գէպի Լուսնի լեռը եր-
կարած, Լուսնի լեռան վրայ խաչ մը,
բթամատին և Լուսնի լեռը գիծով մը
կապուած:

Մ.

Մահ գլխասմամբ, կամ կախաղան.—
Երեւակի լեռան վրայ աստղ մը. Գլխու
գիծը շատ կարճ Երեւակի լեռան վրայ
կանգ առած: Տափակ լեռներ: Բթամատը
դնդակած:

Մսացիուքիւն.— Բոլոր գիծերը շատ

որոշ, ներդաշնակ ձեռք, ճկոյթի լեռնէն
 գիծ մը դէպի այս մասը երկարած: Մաս-
 նեմատին լեռը դարգացած, մատներուն
 երրորդ մատնասկրերը (եղունգին տակին-
 ներք) շատ նրկար: Չեռքին եռանկիւնը
 որոշ:

Մահ վաղածամ.— Գլխու և Սրտի
 գիծերը հազիւ սկսուած, կարճ, կեանքի
 գիծը կտրուտուած, Գլխու գծին վրայ
 խաչ մը:

Մեղամաղձոսութիւն.— Երեւակի լե-
 ուր դարգացած և գիծերով լեցուն: Լուս-
 նի լերան վրայ քառակուսի մը: Թոյլ
 ձեռքեր, բթամատը երկայն և նուրբ:

Միամսութիւն.— Լեռները քիչ որոշ:
 կարճ բթամատեր բայց նրբաւարտ: Գլխու
 գիծը շատ թեթեւ:

Մահ անձնասպանութեամբ եւ կամ
 հակում.— Բաղդի գիծը հազիւ գծուած
 և կամ աստղով մը վերջացած, Լուսնի
 լերան վրայ աստղ մը, ճկոյթի լերան
 վրայ խաչ մը:

Մասնիչութիւն եւ կամ հակում.—
 Գլխու գիծը ժանիքով վերջացած, ոսկ-
 րուտ ձեռքեր, Հրատի դաշտին մէջ վան-
 դակ, Սրտի գիծը լայն և օղակաւոր.
 Գլխու գիծը կեանքի գիծին միացած մին-

չեւ միջնամատին բլուրը: Մուռ ու մուռ
մասն.եր:

6.

Յամառուքիւն. — Կարծր ձեռքեր,
կարճ բխամատ, Սրտի գիծը քիչ որոշ,
Կեանքի և Գլխու գիծերը իրարմէ անջատ
սկսած, ցուցամատը երկար:

Յաջող կեանքին մեջ. — Մանեմատին
բլուրը կլոր, Արևու գիծը շատ որոշ,
բաղդի գիծը ձեռքին մէջտեղէն սկսած և
մատնեմատին բլուրը երկարած. Գլխու
գիծէն ճիւղաւորում մը սկսած և Արա-
մազդի բլուրը երկարած:

Յամառուքիւն դեպի լաւը, յարասեւ
ոգի. — Կարծր ձեռքեր, բխամատը լայն
և առաջին մատնոսկրը շատ թանձր, Գլ-
խու գիծը շատ խորունկ, և շատ որոշ,
ցուցամատը շատ երկայն, յօդաւորում-
ները կապ կապ:

Յանդգնուքիւն. — Կարծր ձեռքեր,
բահի ձեւով մատներ, Արամազդի մատը
երկար, և նոյն լեռը և Հրատինը բարձր,
Գլխու գիծը հակած:

7.

Նշանաւոր կեանքին մեջ. — Ապողոնի
լեռը շատ դարդացած, բաղդի գիծը

բարձրացած շատ որոշ դէպի Արամազդի
բլուրը, Արեւու գիծը շատ որոշ և յաճախ
երեք ճիւղաւորումներով աւարտած :
Կեանքի գիծը ճիւղաւորումներով դէպի
Գլխու գիծը երկարած :

Նկարագիր բարի, լաւ. — Արամազդի
բլուրը լայն, Կուսնի լեռան վրայ եռանկ
կիւն :

Նկարագիր գեւ. — Չեռքը բազմաթիւ
գիծերով ծածկուած, բլթամատին բլուրը
տափակ. Գլխու գիծը Կեանքի գիծէն
բաժնուած սկիզբէն, և ոլորապտոյտ, վեր-
ջացած ժանիքով. երբեմն բլթամատին
յօդաւորումներուն ներքին կողմը խաչով :
Հրատի դաշտին մէջ վանդակ :

Նախանձ. — Արամազդի լեռը տա-
փակ, Սիրտի գիծը առանց ճիւղի, ա-
ռողջութեան գիծը գունաւոր : Մատնե-
մատին վրայ օղակ :

Ե.

Շասախօսու թիւն. — Արածայր մատ-
ներ, Արամազդի մատը երկար և ասոր
լեռը շատ որոշ : Գլխու գիծը ժանիքով
վերջացած : Կուսնի լեռը խաչով :

Շնականու թիւն, լրբու թիւն յեփն
ասիհան. — Երեւանի մատը շատ լայն

և բահաձեւ, Արամաղղի լեռը տափակ,
 Սրտի գիծը աժգոյն կամ բացակայ: Կեանքի
 և գլխու գիծերը իրարմէ անջատ:

Շփոթ միտք. — Նուրբ մատներ, բթամատին
 երկրորդ մատնոսկրը կարճ, Գլխու գիծը
 կեանքի գիծին վրայէն սկսած անջատարար
 և դէպի սիրտի գիծը երկարած:

Ո.

Ոնրի հակում. — Լայն բթամատ գրնդաձեւ,
 կոշտ մատներ, բաղղի գիծը Երեւակի
 բլուրը երկարած: Հերմէսի լեռը տարածուն
 և վրան խաչով, Գլխու գիծին վրայ
 կապոյտ կէտ մը, Երեւակի մօտ:

Որկրամոլութիւն. — Թանձր մատներ
 մազուտ, գէր ձեռքեր, Լուսնի լեռը տափակ:

Չ.

Չարաննիութիւն. — Հերմէսի լեռը պըղտիկ
 գիծերով լեցուն, Հրատի և Հերմէսի
 լեռները բարձր:

Չար բաղղ. — Բաղղի գիծը շատ վարէն
 սկսած, և իր ուղղութեան մէջ կըտրուած,
 մատնեմատին վրայ խաչ:

Չար ոգի, մարելիք. — Սրտի գիծը ձերմակ
 բիծերով:

Պ.

Պատուի չգոյութիւն. — Հերմէսի լեռան
 վրայ աստղ:

Պարսանանաչուքիւն . — Քառակուսի մատները : Բթամատին առաջին մատնոսկրը լայն , երկրորդը երկայն : Ճկոյթը երկայն : Գլխու գիծը շիտակ : Սրտի գիծը երկուքի բաժնուած իր վերջաւորութեանը մէջ :

Պերնախօսուքիւն . — Քառակուսի մատներ , ճկոյթը շատ երկայն , Արեւու գիծը որոշ , Բաղդի գիծը մինչև մատնեմատ :

Պասիւ . — Մատնեմատը շատ երկայն և ասոր բլուրը տարածուն , Բաղդի գիծը դէպի Արամազդ երկարած , Արեւու գիծը շիտակ և շատ մը գիծերով , սրոնց մին մատնեմատը երկարած :

Ջ .

Ջղային ցաւ (ակռայի) . — Լայն ձեռք . սրածայր կամ բահածեւ մատներ , Երեւակի և Ապողոնի մատները հաւասար մեծութեամբ , Լուսնի լեռան վրայ իսաչ :

Ջղային ցաւ կանանց . — Ափը շատ գիծերով , գլխու գիծը ճիւղաւորուամով , Սրտի գիծը կտրատուած , Լուսնի լեռան վրայ վանդակ , մատները ձեռքին երեսի կողմը հակած :

Ջղայնուքիւն . — Լուսնի լեռը տարածուն և գիծերով լեցուն , բաղմաթիւ գի-

ծեր ափին մէջ, չոր ձեռքեր, մատները
 ձեռքին երեսին կողմը հակած:

Ս.

Սիրոյ հակամէտ. — Թոյլ ձեռքեր, երկայն և սրածայր մատներով: Ապողոնի մատը Արամազդի մատէն աւելի երկար, Լուսնի լեռը և Աստղիկի՛նը զարգացած, Սրտի գիծը օղակաձեւ և երբեմն զոյգ:

Սեր (երջանիկ) Արամազդի լեռան վրայ աստղ, Սրտի գիծը որոշ և մինչեւ Լուսնի լեռը երկարած:

Սեր (դժբաղդ). — Արամազդի լեռան վրայ խաչ չկայ, բայց ուրիշ խաչ մը կայ Աստղիկի լեռան վրայ: Գլխու գիծը Կեանքի գիծին կապուած. Սրտի գծին վրայ կէտեր: Բազդի գիծը Սրտի գիծին վրայ աւարտած:

Սեր (կրքոտ, անասնական). — Սոչոր կարճ մատներ, Աստղիկի լեռը տարածուն, Սրտի գիծը տժգոյն և լայն ու շեշտուած օղակ օղակ:

Սեր դրամի. — Պէտք է նայիլ ազանին ձեռքը:

Սեր սեղանաւորութեան, նոյնպէս կոչում. — Բահի ձեւով մատներ. կարճ եղունգներ, ցուցամատը երկայն, Հերմէսի լեռը զարգացած, Գլխու գիծը մինչեւ ձկոյթ երկարած: Եթէ Բազդի գիծը պրզ-

տիկ գիծերով կտրատուած է՝ այս սեղանաւորը գէշ գործեր պիտի ընէ : Նիթէ Բաղգին գիծը և արեւունը որոշ են՝ մեծ հարատուութեան պիտի տիրանայ :

Ստամբու (գէշ) .— Առողջութեան գիծը ծուռ ու մուռ և կտրատուած :

Սնանկութիւն .— Հերմէսի լերան վրայ խաչ :

Սեր ընտանեկան .— Քառակուսի մատներ, Արամազդի լերան վրայ խաչ, Սրտի գիծը երկայն և որոշ :

Սրիկայութիւն .— Սոչոր մատներ իրենց սկզբնաւորութեան մէջ, կարճ եղունգներ, բթամատին երկրորդ մատնոսկրը շատ լայն : Աստղիկի լերան վրայ վանդակ, քիչ պըղտիկ գիծեր :

Սպառնալիք դժբաղդութեան .— Դաստակէն գիծ մը Լուսնի լերան վրայ բարձրացած և Առողջութեան գիծին միացած : Արամազդի և Ապողոնի լերան վրայ միացած գիծեր : Բաղդի գիծը կտրատուած կամ անորոշ :

Սախօսութիւն .— Հերմէսի լեռը բարձր, Գլխու գիծը երկար և ժանիքով վերջացած : Սրտի գիծը օղակ օղակ : Կեանքի և Գլխու գիծերը բաւական տեղ մը իրարու միացած : Նեղ քառանկիւն :

Վ.

Վիճարանող, կռուազան. — Ափը որոշ գիծերով, բահի ձեւով մատներ, ցուցածատը երկար, Հրատի լեռը բարձր, յաճախ ալ Հրատի լեռան վրայ խաչ մը :

Վասուքիւն. — Թոյլ ձեռքեր, առանց Հրատի լեռան, Գլխու գիծը շատ որոշ, նուրբ մատներ, Հրատի լեռան վրայ վանդակ :

Վեհանձնուքիւն. — Վեհանձն և անձնիշխան մէկուն բթ սմառը ձեռքէն դուրս ցցուած կ'ըլլայ, Սրտի գիծը պզտիկ գիծերով կը վերջանայ : Աստղիկի լեռը գուգահեռական գիծեր կ'ունենայ :

Վաւառոսուքիւն. — Կարճ և թանձր ձեռքեր, տափակ լեռներ բացի Աստղիկինէն, այս լեռան վրայ վանդակներ, կարճ բթամատ, Աստղիկի շղթայ մը զոյգ և կամ երեք հատ :

Ց.

Տիրապետող, բռնաւոր. — Երկայն եւ նեղ ձեռքեր. Արամազդի մատը շատ երկար, կեանքի և Գլխու գիծերը իրարմէ անջատ սկսած, Հրատի լեռը շատ զար-

դացած : Բթամատին երկրորդ մասնուսկրը
չատ երկայն : Աբամազդի լերան վրայ
քառակուսի :

Ց.

Ցասկոս բնութիւն .— Կեանքի գիծը
տժգոյն , կամ այս գիծին վրայ կղւիներ ,
(բուրակներ) Առողջութեան գիծը գրեթէ
դեղին :

Փ.

Փառասիրութիւն .— Աբամազդի լեռը
տարածուն և չափազանց երկար այս մա-
տր : Կարծր ձեռքեր , Գլխու գիծը երկար
և խորունկ , Սրտի գիծը՝ առանց ճիւղա-
ւորումի երկու ծայրերը :

Փիլիսոփայութեան մէջ գորաւոր .—
Մասներուն յօդաւորումները կապ կապ :
Քառակուսի մասներ , հաստատ ձեռքեր :
Սոչոր բթամատ :

Բ.

Քաղաքականութեան կոչում .— Հեր-
մէսի լեռը զարգացած , Աբամազդի և
Հերմէսի մասները երկար , Հրատի և Ա-

րամագղի լեռները բարձր, Գլխու գիծը
շատ որոշ և շատ շիտակ:

Քննադատող. — Քառակուսի մատներ, մատուկներուն իրարու միացած տեղերը կուենտ. մատնեմատը և ճկոյթը երկայն, Հրատի դաշտը դարգացած:

Քաջուքիւն. — Կարծր ձեռքեր, բահածեւ և կարճ մատներ, Արամագղի մատը երկայն, Հրատի լեռը և դաշտը շատ դարգացած, Հրատի լեռան վրայ խաչ մը. Առողջութեան գիծը Գլխու գծին միացած Լուսնի լեռան վրայ: Հրատի լեռան վրայ խաչ մը:

Տ.

Ֆիզիքական ոյժ. — Կարծր ձեռք, բժամատը երկար և թանձր: Հրատի և Արամագղի լեռը տարածուած, Առողջութեան գիծը շատ որոշ, երկար և խորունկ, լայնեռանկիւն:

Վ Ե Ր Զ

